

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՖԱՅԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

Այս տարեգրութիւնը գտնվում է Մատենադարանի № 7709 ժողովածուի 220ա—244բ էջերում, իսկ մի փոքրիկ հատվածը՝ 148բ, 149ա, ր և 150 ա էջերում և վերջիններիս լուսանցքներում: Խաչատուր Կաֆայեցու տարեգրութիւնը լույս է տեսնում առաջին անգամ, սակայն նրա մասին «էջմիածին» ամսագրում առանձին հոդված ունի պրոֆ. Ա. Աբրահամյանը (1944 թ., № 1, էջ 39—51):¹

Ժողովածուն Խաչատուր Կաֆայեցու (նույն ինքը Խաչգոռու) ինքնագիր օրինակն է, որ ընթերցանակել է Կաֆայում, սկսելով 1620 թվականից (էջ 66ա):

Տարեգրության մեջ ինչպես և ժողովածուի մի քանի մեծ ու փոքր հիշատակարաններում գտնում ենք հեղինակին վերաբերող մի ջարձ տեղեկություններ: Այսպես, 1656 թ. դրած հիշատակարանից իմանում ենք, որ նա այդ ժամանակ եղել է 64 տարեկան, հետեապես Խաչատուր երեցը ծնվել է 1592 թ. (1656—64): Նրա աշխարհական անունը եղել է Խաչգոռու (էջ 66ա, 138բ, տես նաև տարեգրության մեջ): Նա ամուսնացել է 25 տարեկան հասակում՝ 1617 թ.: Այնուհետև 1624 թ. ձեռնադրվել է քահանա և կոչվել Խաչատուր:

Խաչատուր Կաֆայեցին իր տարեգրության ընդգրկած ժամանակագրական սահմանների մասին հիշատակարանում հետևյալն է գրում. «... մի մեղադիր լինիք գիրեր է գրաց անպիտանի, որմն առաջին ոմն յետի, տաղեր և հայրենիք... Թվականներ անթիւնի, ՌԾ է (1608) եղեալ է յաշխարհիս քաներ զարմանալի, ոմն պիտանի և ոմն անպիտանի, ոմնեմըն ցանկալի և այլ ոմնեմըն ախորժելի, իմաստուն հետևի, կարոյալ և աճապի, թէ այսպէս բաներ է եղեալ յերկրի . . . որ հետեւեցալ հետ թըւականին մինչ ի ՌՃՆ (1656) թվականին, եթէ հասանիմ այլ կու գրեմ, թէ չի հասանիմ դուք հասանիք ձեր փափաքանացն» (էջ 38ա):

¹ Հոգվածագիրը գնահատելի աշխատանք է կատարել, ոակայն բնագրի և հոգվածում կատարված մեղրերունների համեմատութիւնը ցույց տվեց, որ այդ գործը չի կատարված պատշաճ բարեխղճութամբ, նկատելի են բնագրի խմբագրման հետքեր, հեղինակի ծածկադրեր բերված է թերի և այլն: Օրինակ՝ պրոֆ. Աբրահամյանը Խաչատուր Կաֆայեցու ծննդյան տարեթիվը որոշելու համար, վերջինիս չափածո հիշատակարանից մի փոքրիկ հատված է մեջ բերում, բայց հետևյալ ձևով.

«ՀԴ (64) հասեալ առ ափն գերեզմանի...»

Հետեւեցալ մինչ ի ՌՃՆ (1108) թվականի... Մինչգեո այս երկու տողը բնագրում այսպես է.

«Եղեալ եմ ԿԴ (64) ամի

և (բնագրում է) հասեալ եմ առ ափն գերեզմանի:

.....

որ հետեւեցալ հետ թըւականին մինչ ի ՌՃՆ (1656) թվական...» (էջ 37բ, 38ա):

Այստեղից ինչպես դժվար չէ եզրակացնել, նախ՝ խաչատուր Կաֆայեցին վերոգրյալ հիշատակարանը ամբողջությամբ ժողովածուի մեջ շարադրել է տարեգրությունը մինչև 1656 թվականը հասցնելուց հետո, երկրորդ՝ նա տարեգրությունը հիմնականում սկսել է 1608 թվականին վերաբերող տեղեկություններով և վերջացրել է 1656 թվականի դեպքերի հիշատակությամբ, միաժամանակ զգուշացնելով, որ 1656 թվականից հետո «եթէ հասնիմ, այլ կու գրեմ»:

Եվ իսկապես, եթե բացառենք բուն տարեգրության սկզբի խիստ համառոտ երկու տեղեկությունները, որոնք վերաբերում են 1583 և 1584 թվականներին, ապա տարեգրության սկզբնական եզրը կլինի 1608 թվականին վերաբերող վկայությունը: Վերջին և ուրիշ մի քանի տեղեկությունները գտնվում են բուն տարեգրությանից առանձին ժողովածուի 148թ էջի և 149ա, բ և 150ա էջերի ներքեի լուսանցքներում:¹

Տարեգրության ժամանակագրական վերջին սահմանը կարող է մի փոքր կասկածանքների տեղիք տալ, ժողովածուի վերջից կորած թերթեր լինելու պատճառով: Ինչպես երևում է մեզ արդեն հայտնի հիշատակարանից, խաչատուր Կաֆայեցին տարեգրությունն ավարտել է 1656 թվականին վերաբերող տեղեկություններով՝ շարունակելու պայմանով, եթե դրանից հետո էլ կենդանի մնա: Տարեգրության քայքայված վերջին թերթերը վերաբերում են 1656 թվականից մինչև 1658 թվականը տեղի ունեցած անցուղարձին և վերջանում 1658 թվականին ում Գրիգորի մահվան առթիվ գրված բանաստեղծությամբ: Այստեղից ենթադրում ենք, նախ՝ 1656—1658 թ. թ. տեղի ունեցած եղելությունները խաչատուր Կաֆայեցին արձանագրել է համաձայն իր այն խոստման, թե «եթէ հասնիմ, այլ կու գրեմ», երկրորդ՝ 1658 թ. Գրիգորի մահվան առթիվ գրած բանաստեղծությունը տարեգրության վերջաբանը կարելի է համարել, երրորդ՝ տարեգրության վերջին սահմանը 1658 թվականից այս կողմ չի անցնում, չորրորդ՝ հեղինակը մահացել է 1658 թվականի վերջերին (գուցե և 1659 թ. սկզբներին): Խաչատուր Կաֆայեցին իր տարեգրությունը գրի է առել ոչ թե մեկ անգամից, իր կյանքի վերջին տարիներին, վերհիշելով իր ժամանակակից կարևոր դեպքերը, այլ տարիների ընթացքում, եղելությունների թարմ ազդեցության ներքո, այսպես, 1621 թ. տեղի ունեցած մի շարք դեպքեր մասնորամասն կերպով հիշատակելուց հետո գրում է. «Եւ դարձեալ նոր ռաբանչիք այնաւր տարիքի Թ. (9), օրն երկուշաբթի, ձիւն եկաւ... կամ. Ձի տէր խաչատուր վարդապետ այսաւր փոխեցաւ յաշխարհէս ի յերկինս...», կամ «Թվական ՌՁ (=1631) այսաւր շաբաթ օր է, ապարիլի 1 (30) է. այս (խաչատուր նվիրակը— Վ. Հ.) եկաւ ան սահաթին մտաւ նաւ և գնաց...»:

Այս և նման ուրիշ օրինակները նկատի ունենալով առաջարկվող տարեգրությունը որոշ առումով կարող ենք խաչատուր Կաֆայեցու օրագրություն համարել: Տարեգրության վերջին տեղեկությունները ժամանակագրական հաջորդականությամբ չեն նշված, այս հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ տարեգրության որոշ տեղեկություններ ամենայն հավանականությամբ արձանագրվել են հետագայում, վերհիշման միջոցով:

Առաջարկվող ժամանակագրությունը ժամանակակցի և ականատեսի ար-

¹ Ժողովածուի 222բ, 232բ, 233ա էջերի լուսանցքներում (տարեգրության առնթեր) մի քանի փոքրիկ տեղեկություններ դարձյալ արձանագրված են իրեն՝ հեղինակի կողմից:

² № 7709 ժողովածուն, հատկապես նրա վերջին մասը նշանակալի չափով փնտրված է:

ժանաշավատ և արժեքավոր տեղեկություններ են, որոնք վերաբերում են Ղրիմի պատմությանը և այլն: Բավական հետաքրքիր և մանրամասն կերպով տրված է Ղրիմի խաների գահակալական պայքարը, մի շարք խաների ժամանակագրական տոհմագ հաջորդականությունը, Ղրիմի խաների վարած պատերազմները, այդ պատերազմներում հայերի խաղացած դերը: Տարեգրության մեջ տեղ են գտել նաև քնական զանազան պատահարների, Ղրիմի ներքին՝ տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ:

Տարեգրությունը հետաքրքիր է նաև բարբառների պատմության ուսումնասիրության կապակցությամբ, օրինակ «Խոտ չի քարամ ըռնէ», «եկան գեղբանքն ընկան...», «հուրթունայ եղաւ ան գեղերն, շախշներ կոտորեցաւ, պարիսպէն կրտորմն տեղ բլաւ...», «... քովի տրներն որըն քլաւ, որըն շէն մնաց, որին պատն բըլաւ, որին առիքն չոքեցաւ...», արխերն աւրեցւ...». «... քաղում տներ աւիրեց և գեղրանք կոխեց, ոչխարն ու տաւարն, պախր ու եզն ու կոմէշն քիշեց իրեր տիրվտիքն ամէնն լալակին հետն եկան, տմանք գտան կէսվի կէս, որմանք իսկի չի գտան», «[ինքն շըր] ջոմալիք մարդ էր՝ կահ ասաց Կաֆան [կո]ւ երթամ, [կ]ահ ասաց կերթամ մեր Թօփրախալան.... կահ ասաց գուգամ, կահ ասաց չեմ ի գալ...» և այլն և այլն:

Խաչատուր երեցի բառապաշարից բազմաթիվ բառեր՝ գեղրանք, շախշներ, կաորմ, քով, հոս, հոդ, առիք, չոքեցաւ, արխ, տիրվտիք և այլն, գտնում ենք Շիրակի, այժմյան Ղուկասյանի շրջանի գյուղերի քնակչության քարքառի մեջ:

Այն վերսիան, որ Ղրիմի հայերը գաղթել են Անիից, հարկատրում է վերջինիս բարբառը ուսումնասիրելու տեսակետից ևս, սույն տարեգրությունն առանձին հետաքրքրության առարկա դարձնել, եթե, իհարկե, Խաչատուր Կաֆայեցին ինքը XVI-ի վերջերի և XVII դարի սկզբներին բուն Հայաստանում ուժեղացած գաղթականական հոսանքներից մեկի պատճառով չի ընկել Ղրիմ:

ՌԼԲ (1583) Թվականին Օսման փաշան եկել է բաղում աւերք 220ա
արարել է:

ՌԼԳ (1584) Ասառուածածին առննրւել ի Կոլին և սուրբ Ուր-
բաթ քակվեր է:¹

5 Թվին ՌԿԴ (1615) տանուտէր եկաւորն, եաւթներեակնն 220բ
է (7), գիրն Ճ (100), վերադիրն ԻԱ (21), լուսնագիրն Բ (2). այս
ամի ամսեան մայիսին ԻԶ (26), աւրն ո[ւ]րբաթին շարժեցաւ
քաղաքն Կաֆա. քակտեցաւ պարիսպն, շարժեցաւ երկիր, քակ-
տեցան աներ, սասանեցաւ երկիր, հիացան արարածք, ողբային
10 կանայք, լային տղայք, բարձրանայր ծոֆն, երրեքայր և եառ դառ-
նայր, փառք սքանչելեացն արարչին:

Թվին ՌԿԵ (1616) ամսեան յուլիսի Ի (20), աւրն շաբաթ,
գիրն կիրակիլուս, ազգն յուռուս կոխեց Կաֆան և աւերեց բա-
ղում տեղի² քաղաքս այս կըրկին նսրոգեսցի:

15 Թվին ՌԿԶ (1617) յուլիսի Ժէ (17), քաղաքս անձրև եկաւ,
գետոց արուցումք եղաւ. Ժ—Ի (10—20) կարմունճ տարաւ, Ի—Լ
(20—30) տուն բլաւ, Ե—Զ (5—6) հոգի խեղիեցաւ և շատ քանչե-
լիք ցուցաւ, վասն մեղաց մերոց, օրն չորեքշաբթի:

Ամսեանն աւգոստոսի աւուր ԻԴ (24), կիրակին սուրբ Ան- 221ա
նաի, մեղաւորս աշխարհս մտի և հարսանիս արարի:

Ծնաւ որդին իմ Խոթլուպէյ Թվին ՌԿԷ (1618) յունիսի Զ
(6), աւրն շաբաթ: Ծնաւ դուս[տ]ր իմ Էտըրմէլիք Թվին ՌԿԸ
(1620) սեկտեմբերի է (7), օրն հինգշաբթի:

ՌԼԸ (1623) Թվականին Աննա խաթունս ծնամ, սեկտեմ-
բերի³ Թ (9) փոխեցաւ առ աստուած:

25 Թվին ՌԿԶ (1617) էր, Ժ (10) խաւըրդա յուռուսին վրա
գնաց Մէմի փաշան, Կաֆայիս փաշայ էր, բարիտես և բարի
մարդ էր, և աշխարհի բարեկամ էր: Ուռուսն ըսպան ղ[ն]ա և Գ
(3) խաւըրդան իառ, և շատ մարդիք գերի տարաւ, և այլ ոմանք
30 ի սուր մաշեցան, և այլ ոմանք փախրստական: Ամսեան ոգոս-
տոսի մեծ տրտմութիւն եղաւ Կաֆա քաղաքին և սասանուցն
ամենեցուն:

ՌԿԷ (1618) Թվականին սուլթան Ահմատն փոխեցաւ առ
աստուած գնաց, սուլթան Մուստաֆան նստաւ տեղն⁴ || Գ (3) 221բ

35 ամիս Թագաւորութիւն արաւ: Վասն բարկութեան ժամանակիս
փոխեցին զնա և սուլթան Աւսմանն տեղն դրին⁵ և շատ բար-

կութիւն եղաւ Բստամպօլ քաղաքին. Եւ ետ այնորիկ քաղաքն կրակ անկաւ և այրեցաւ բաղում տեղիս և եղև մահ տա-
րածամ մեծ, սաստիկ անձրևք, և գետոց արուցումք: Շարժ եղաւ
յուլիսի Բ (2), օրն հինգշաբթի, Կաֆան, Դարձեալ Ա (1) կին-
արմատմն Դ (4) յայր զաւակ ընծայեցաւ, ամենեքեան զարմա-
յաք և հիացաք և լիառս տուաք արարչին աստծուոյ. Եւ դարձեալ
այն օրն կիրակի Ա (1) կինարմատմն զինքն զինքն յայրեց,
վասն փորձանայ սատանայի, լիուռն վառեց, դադաթն աւերեց,
մէջն մտաւ, իւր ազգականքն և իւր որդիքն տունն չէին. Երբ
որ ևկան նա ինքն յայրել էր և տունն բռնել էր, չային ամե-
նեքեան ի վերա նորա. Եւ կողակիցն հաւս չէր, Բ (2) աւուրն
ևաոյ ևկաւ և իւր կինն ոչ գտաւ. Խիստ քանչելիք եղաւ ամ-
սիանս օգոստոսի Բ (2): || ԺԳ (13) դարձեալ շարժ եղաւ. Սեկտեն-
բերի ամսոյն, լուսնի Բ (2) շարժ ելաւ. Եւ ետ այնորիկ ազևոր
աստղն ծնաւ. Հոգտենբերի թուր ծնաւ. Դեկտենբերի դարձեալ
ազևոր աստղըն ծնաւ:

Կարմիր գլխոյն սև խապար եկաւ, թէ բազում ասքէր ջար-
դեցաւ և շատ պարոնայք մեռան, խանըն ճորով խալրսեցաւ:

Ապրիլի ԺԵ (15) Ճանպէքէրէ խանն Խղըլպաշէն եկաւ. Ին
20 (27) տաւնանմա եղաւ Կաֆան, Ապրիլի ԻԱ (21) Յովաննէս քա-
հանլիսիս ելաւ առ աստուած:

Աւգաւստոսի ԻԶ (26) բարկութեամբ անձրև եկաւ ի վերա
Կաֆա քաղաքի. Պարիսպն Գ (3) մասն բլաւ՝ Բ (2) Թարսա-
նան, Ա (1) ալ Խղար խուլանին. Եւ ետ յայնորիկ ևղև մահ տա-
րածամ մեծ, որ սուռն չի թող չի լացուցած. Սեկտենբերի Ժ (10)
25 զիշերն շարժ եղաւ, հանց որոտաց, որ ոմանք ասին, թէ Թօփ
քաշվեցաւ. Զայս քանչելիքն աստուծոյ, վասն մեղաց մերոց է.
Թվին ՌԿԹ (1620) Ճանպէքէրէ խան⁸ ըստակ կըտրեց, Գ (3)
ամիս քաղաքն փակվեցաւ, առ ու ծախ ոչ եղաւ, մինչև յուլիսի
30 ու աւգաւստոսի, հապա հաւասար հանդարտեցաւ. Գիտացիք եղ-
բայրք, զի Ժ (10) տարի է քանի խան է, ասով Դ (4) հեղ կլա,
որ ր(ս)տակ կը կըտրէ:

Սուրբ Թորոս եկեղեցուն ձեռք դրտք, աստուած աւրհնէ ժո-
ղովուրդն, քերականքն սեկտենբերի ԻԳ (23) և դրեցին պատկեր
35 ատենին տիրամօր Աստուածածնին և սուրբ Լուսաւորչին և սուրբ
Սարգիս զաւրավարին և որդոյ նորա Մարտիրոսին և Մինասա
քանչեւադործին. Եւ միւս պատկեր սուրբ խորանին տիրամօր
Աստուածածնին և միածին Յիսուս դրդին. Աւծում էր շաբաթ ի
սուրբ Յակոբա և Մծնա⁹ հայրապետի, արքեպիսկոպոսութեան
40 և տէր Խաչատուր վարդապետին և տէր Թորոս հայրապետին,
որք առաջնորդ են Կաֆային. Նոյեմբերի Լ (30) և լուսնի ԺԵ (15)
խաւարեց չորեքշաբթի զիշեր Դ (4) ժամին մինչև¹⁰ || ի Ե (5)
ժամն առաւօտն. Հինգշաբթիլուս որոտաց և երեկ անձրև:

Ի Թվին ՌՀ (1621) տանուտէրն կարիճն, դեկտենբերի ԺԸ
45 (18) ձմրոնամուտին, ձմեռն երկար բռնեց և զիժար, ով կարէ
պատմել բարկութիւն, որ եղև վասն մեղաց մերոց, որ այսպիսի

դարձացում ձ (100) ամեա ակեր մարդիք այլ ոչ տեսեալ էին, Կաֆայ քաղաքիս ծոփն պաղեցաւ Գ (3) մղոն, այնպէս սառեցաւ, որ Գուրն ոչ երևէր և մարդիք ի վրան ի շուրջ գուգային. Եւ մէկ մի Ռ և Շ (1500) տապան¹¹ չափելով զնաց և հետն այլ ոչ երևէր բաղում ժամանակ. Եւ աղրիւրք ցամաքեցան և հաց ոչ գտանէաք և փառ վառելոյ, բաղում աղքատք ի ցրտոյ մեռան և ըզմաց ոտն և ձեռք թափեցան և սապղար եղան. Տաւվէթքէրէ սուլթանն ի Գոռէլ սէֆէր էր,¹² նոցա դայպուրն աւերելէր, բաղում քաղաք տապալել էր, բաղում մարդիք՝ || այրք և կանայք 223բ
10 մանտր տղայք գերի արել էր և բաղում գիրգ նոցա գերի վարել էր և Մ (50) հոգի մեր ազգէն Հոսաւորչի, և նոցա ազգէն անթիւ և անհամար գերիք գուգային, ճանփան բռնեց ձիւն և ցուրտն և սառնամանիքն, բաղում գերիք և սսքէրք մեռան ի ճանապարհին, ցրտոյ և սառնամանեաց, բաղում կառք և կրիվարք մնաց ի ճանապարհին, բաղում ընկերք իւրեանց թողին, բաղումք ծառայք իւրեանց թողին, բաղումք ապրանք իւրեանց թողին, մալ և խաղինայք ի ճանապարհին.

Վասն սաստիկ ցրտութեան Գ (3) ամիս գիշեր ցորեկ մէկ աւրմն աման չէր ետ¹⁴ մինչև ի մարտի ԺԵ (15), ապա արև և 20 արեղակ տեսաք. Դարձեալ ասացի[ն] թէ Ըստամբուլ պաղողն սառեցաւ ԺԸ (18) մղոն տեղ, որ ոմանք ասացին թէ Կոստանտինոս թագաւորին ժամանակն եղել է ի Ունէ (647) թվալի[ն]ին. փառք արարչին աստուածութեան.

Եւ զարձեալ նոր ըսքանչելիք այսաւր ապրիլի Թ (9), օրն 224ա
25 երկուշաբթի ձիւն եկաւ. Եւ մայիսի է (7) ձիւն եկաւ, ցուրտ և հողմ սաստիկ, օրն երկուշաբթի Սուլխաղա¹⁶ դաշտերն ու սարերն ի սպիտակացուց թգաւ, կանկնեցաւ բուքն:

Թագաւորն Հոգարացոց սուլթան Օսմանն և Թագաւորն մոգոց Ճանպէքէրէ խանն հեծել զնացին ի վերա Գոռելին,¹⁷ ամսեան յուլիսի, բաղում ասքէրօք և ամօթալից զարձան ի նոցանէ, 30 զի ոչ կարացին պատերազմել ընդ նոսա. Եւ մոգա մի Նոգայ ազգէն Դամուրխան անուն, յուժ աղթող եղև և զաւրաւոր, քան զՀոգարացիք և բաղում տեղ աւիրեաց և այրեաց բաղում գերիք վերուց և խրկեց Հոգարացոց թագաւորին: Եւ նա յոյժ սիրեաց 35 զնա և բաղում հարկիք արաւ նմա և մեծաբեաց զս[ա], պարոն և պէկլէրպէկի կացուց զնա ի վերա Յուսուֆեցոցն և Սիլիսրա¹⁸ քաղաքին:

|| Եւ Թագաւորն¹⁹ դարձաւ ի տեղ իւր, զի առաջի Թագաւորութիւն էր, ընտէր պիտեր նմա երթալ ի պատերազմ, զի տղահասակի էր և չունէր խելօք մարդ իմաստուն ի քոփն. Եւ ետ 40 այնորիկ եղև սով երկիրիս մերում, մահ և տրտմութիւն մեծ ի վերա բաղում քաղաքաց:

Եւ զարձեալ ՌՀԱ (1622) թվալի[ան]ին անիծեալ եղին Հոգարացիքն և պատժեալ ի աստուծոյ. Անաւրինեցան իշխանք 45 Թագաւորի և մեծամեծք և ոչ հնազանդեցան հրամանի Թագաւորին և աստուածային օրինացն ելին: Զի Թագաւորն իւրեանց

քարկոծ արարին և ոպանեցին սուլթան Օսմանն և պատերազմեցան ընդ միմիանս և մեծամեծք անկան ի սուր սուսերի, քաղաքացիք խառնակեցան և մարդիք նենգաւորեցան ընդ միմիանսս:²⁰ Եւ ըազում չարիք տիրեց ի վերա երկրի և սուք մեծ

5 Ստամպաւլ քաղաքին: Ողբային այսաւր ազգ և ազինք, զի ոչ տեսեալ էին և ոչ լըսեալ, որ ծառայք և իշխանք || ենկիչերիք և 225ա ըսպահիք միարան լինին և թագաւորն սպանեն: Ողորմելի եղև և փոսոսալի սուլթան Օսմանն, զի տղայ հասակի էր և նորահաս մանուկ, զի ոչ վայելեաց զթագաւորութիւն, Դ (4) ամ թագաւոր և ոչ այլ: Պատժին նոքա որ պատժեցան, սուրք իւրեանց զիրանք սպան: Թագաւոր կացուցին սուլթան Մուստաֆան:²¹ Ժաղր և խայտառակ եղան ամենայն ազգաց: Յունիսի Ժ (10) գիշերն երկուշաբթիլուս ազգն յուռուս եկաւ մտաւ ի լիման Կաֆային, ԼԴ (33) խայրխ և ոչ կարացին փասս առնել և ամօ-

15 թալիք դարձան և գնացին, Ե (5) օր խուղբին լիմանն²² պառկեցան և շատ աւերք արարին՝ Ե (5) նաւ առին, Տաթին տանն²³ պաղչաներն աւիրեցին և քակեցին:

Ռէֆ (1623) թվականին ծանպէքէրէ խանն ըստակ կըարեց, քաղաքս աւիրել էր վասն մահու և սովուն: Ջի սաստիկ մահ էր

20 և սով, հացին քիւան Ջժ (600) ստակ էր, տեսաք աչօք մերօք: Բաղում մարդիք Դաման²⁴ գնացին և ապրանք ճարեցին իւրեանց, աստուած ոչ բարկացաւ սաստիկ, թէ մեղաց մերոց բարկաց[աւ], այլ գթացաւ Դաման քաղաքին, || երեստ աստուած և մեզ 225բ լիացուց. դեկտեմբերին որ ըսկսակ²⁵ և եղև լիութիւն: Ամսեանըն մայիսի Թ (9), օրն ուրբաթ, Մէհմէտքէրայըն խան եղաւ, եկաւ Կաֆան:²⁶ Ծանպէքէրայն փախըստական եղաւ, Տօլվէթքէրայ սուլթան և ծանպէքէրէ խանն ողորմելի եղեն և փոսոսալի: Ջի կենդանութեան իւրեանց խափանեաց թագաւորութիւն և քիչ մի ապրանք ճարեցին և ղերգեա գնացին Ըստամպօլ:²⁷ Եւ գնաց

30 Մէհմէտքէրէ խան նստաւ ի թախթ թագաւորութեան Գ (3) ամիս:²⁸ Եւ ժողովեաց իւր մեծամեծք և գնաց, թէ Ախքէրման սէֆէր ունիմ ի վերա Դամուրխանին:

Սեկտենբեր ամսուն ազգն յուռուս Աւրինբերանն²⁹ կոխեց, այրեց և աւիրեց և քրիստոնեայքն ի սուր մաշեց. ԼԲ (30000)

35 ձիաւոր և կէսն հետեակ և շատ թաթրի էլ կոխեցին և գերի վերուց. բազում մարդիք տապալեցան և աղքատացան:

Հոկտենբերի[ն] խանն եկաւ Դամուրխանոֆն և Նողայ աղգոֆն:

Փոփոխուին թագաւորաց՝ սուլթան Մուս[տ]աֆան փոխեցին

40 և սուլթան Մուրատն տեղն դըրին:³⁰

Ջրոց պակասութիւն եղև, որ ոչ գտանէաք ըմպելոյ ջուր 226ա վաղուց ժամանակաց, ջրհորներն զամէնն բացին անկից կու խմէին, լեղին ով կու հարցընէ կամ քաղցր: Տօլապին ջուրն ցամաքեցաւ և այլ բազո[ւ]մ հորեր և աղբիւրքն ամենեկին:

45 Աւետիք քահանան փոխեցաւ առ աստուած սեկտենբերի Ժէ (17):

Թվին ՌՀԳ (1624) ամի ամսեանն մարտի ԺԵ (15), աղու-
հացից Զ (6)-ում, կիրակին Լուսաւորչի, և զիս անարժանս հող
և մոխիրս, յուլ և ծուլս, կիսասարկաւարք Խաչդոռուզ մեղաւորս,
ձեռնադրեցին զիս քահանայ, որ չէի յարժան կարքի և աստի-
5 ճանի. աստուած լուսաւորէ հոգին Յաւետիքին և աշխատաւորին
իմոյ՝ տէր. Խաչատուր քահանայի, որ շատ դատեցաւ վասն իմ,
որ է ինձ փեսա և հայր. Առաջնորդութեան տէր Խաչատուր
վարդապետի և տէր Թորոս հայրապետի և խորմցի տէր Մովսէսի
աւրհնութեան արժանացաք աջով նոցին, յաւուրք իմ հինգշաբ-
10 թի, Խ (40), յապրիլի ԻԹ (20) անմահն պատարագեցի,³¹ և ար-
ժանաւորեցա սուրբ խորհրդոյն անարատ մար[մ]նոյն և պատ-
ւական յարիւնսյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւրհնելոյն
յաւիտեան.

Ապրիլի ԺԱ (11), կիրակին Քաշոտի³² յուռուսն կոխեց Խրի-
15 մին վերի մահալտն և քրիստոնեայքն գերեցոյց և պարծանքն
քրիստոնէից սուրբ Նշանն զերի վերուց և խաւարեցոյց վանքն
տէր Մովսէսի.

Մայիսի Գ (3), օրն երկուշաբթի Շահինքէրէյ սուլթան եկաւ
Կարմիր զլիսայն,³³ և երկի[ր] տային աւետիս միմիանց ի դալըս-
20 տ[ե]ան նորա, թէ յատիլ թագաւոր է և խաղաղութիւն արասցէ
մեղ.

Դարձեալ նոր սքանչելիք և զարմացումն ամենեցոյն, որ
եկաւ ճանպէջէրա խանն և Տօլվէթքէրէ սուլթանն մայիսի ԻԴ
(24), օրն երկուշաբթի. Եւ եղև սասանումն ամենեցուն և բար-
25 կութիւն մեծ քաղաքիս մերում, և ոչ գտանէին կերակուր ամե-
նեքեան մարդիք և անասունք. զի փակեալ եղեն ամենայն զը-
րունք և ամենայն մրքածաղք, մսածաղք և հացածաղք, վասն
բազմանալոյ անօրինաց ի վերա քաղաքիս. ՀԵ (75) օր պակե-
ցան Խ (40) խաւըրդայ. Եւ անաւրէն ճանպէջէրէ խան և Տօլ-
30 վէթքէրէ սուլթան և այլ պաղի անօրէնք պատեցին զմեզ. և ամէն
օր պատերազմէին ընդ իրար, ի վերա Շահինքէրային և Մէհէ-
մէտքէրային, և ոչ կարէին աղթել և ամալթալից դառնային.
ոմանք մե || ռանէին, ոմանք կիսամահ գային, ոմանն զնկերս և

227
եղբայրս լային և զերիվայրս ողբային. Խոռք չորացան, աղրիւրք
ցամաքեցան, կառք պտկասեցան, աղաղակէին անասունք և խոտ
35 ոչ գըտանէին՝ հողրն լզէին, մարդիք ողբային, կանայք կոծէին,
տղայք լային և հայրք մխիթարէին, թէ այսաւր և վաղն մեզ
խաղաղութիւն կու լինի, և փակեալ դրունք կու բացի և մեզ ու-
րախութիւն կու լինի. Այսաւր և վաղն ասել և զմիմիանս մխի-
40 թարելով մինչև եղև զրաւ մարտի. և կատարումն աւր առաջի
աւգաւստոսի և կիրակի բարիլուս տաւաօտո[ւ]նն փախըստական
եղև ճան[պ]էջէրան և սուլթանն պայրախն առնի և հազիւ ի
խատըրդան ընկան. և զօրքն կոտորեցան, մեռնողն մեռան, ողջք
փախան, այլք ծոցն լցվան և այլք լերինս և ի մահալան ընկան
և հազիւ[ւ] գերծեցան. Ե[ւ] Շ—Ո (500—600) յէրկան գտակ գերի

վարեցաւ, 2—2 (900—700) ի սուր սուսեր մաշեցան, բազում լաշ
դիզեցան ի ծովեզերն, Բ (2) վազիր սատակեցաւ և մէկ մեծ վա-
զիր եարտլը յեզաւ, մտան խատրըխան և գնացին: 227Բ
Քէրայըն յուն³⁶ էր բազում ասքէրմոք: Նողայ և ուռուս պատե-
5 ցին բոլոր պարիսպն ի մահալան և բազում տնել տապալեցին,
և մեղ կողոպտեցին, չախչրներ քակեցին, և վանորայքն յաւի-
րեցին, և բազում չարիք տիրեցին ի վերա մեր:

Փառք աստուծոյ արարչին, աստուած ոչ սաստիկ բարկա-
ցաւ, տյլ ղթոցաւ մեղ, որ անաւրէն Հագարացիք ամաւթալիցք
10 եղեն և ոչ կարացին զօրանալ ի վերա մեր: Թագաւորաց Թա-
գաւորն՝ աստուած գոհանամք զնորա բարէգթութիւն, որ զօրա-
ցոյց Շահինքէրտյ սուլթան և Մէհմէմէտքէրէ խան. շնահաւոր
խան, շնահաւոր սուլթան, որ տիրեց Սուլթաթ³⁷ գաւառին³⁸ և
15 Կաֆա քաղաքին, եղև բարութիւն և խաղաղութիւն, սէր և հաշ-
տութիւն, աւանանմա սեկտենբերի ժն (15), բազում ուրախու-
թիւն: Եւ ետ այնորիկ Շահինքէրայ ելաւ գնաց, թէ սէֆէր
կերթամ, գնաց և բազում նողայ գիշեց³⁹ ի ներս իբեր. և այտ է:
Դեկտենբեր ամսուն ժ2 (16), հինգշաբթի գիշեր Ա (1) յու-
ժով քամի ելաւ, բազում աւերք արաւ, պատեր և տնել բլոյց,
20 և Բ (2) մինարա քարուքանտ արաւ և Խրմին ծառերն թուփօջն
և աակոջն ի հան:⁴⁰

Թվին Ռէն (1626) ամին քանչելիքմ եղաւ. ամսեանն մա- 228ա
յիսին գետին պաարովեցաւ, լեռներ ու սարերն յիրար դիպան
աղթարուտաւնտէր⁴¹ եղան և ի վայր խաղացին:

25 Ռէն (1626) թվականին, ապրիլ ամսուն նոր ըսաակ կըտրեց:
Թվականին Ռէ2 (1627) ամին բարկութիւն շատ եղև և ծան-
տրը խարճ [վ]երցուցուցին քրիստոնէից: Խան ելաւ սէֆէր գնաց
ի վերա Չէրքէսին. Ա (1) մեծ խարճօն ձգեց ի վերա քաղաքին.
ոմանք Ե (5) ոսկի տրւին, ոմանք Դ (4) ոսկի արւին: ոմանք
30 Գ (3) ոսկի տրւին, այլ ոմանք Բ (2) ոսկի տրւին:

Վախիր ֆուխարայ Դամուրխան փաշան չարկամ եղաւ, Շա-
հինքէրայ սուլթանն գիշերով կսխեց և զինքն փախուց, կինն ու
տղաքն, մալն ու խաղնան ի հօս ֆնաց: Մահմուտ աղան հեծել
քաշեց և վրան գնաց և նա հեծելն չարղեց, Մահմուտ աղան ճո-
35 րով աղատեցաւ, մերկիկ և անաւթի ազատեցաւ և Ախքէրման⁴²
ընկաւ:

Եւ ետ այնորիկ Թագաւորէն էմր եղաւ թէ՛ Օւզուն⁴³ բերթ 228Բ
պիտի խորդ[ակ]ըւի, մեզի մարդ պիտի, աքապաի ըսաակ պիտի,
ժողովեցաւ ըսաակ, ոսկի, խուռ, հայէ և տաճկէ, տուաք մարգիք
40 բազում քրիստոնէայք, ոմանք վարպետայք, ոմայք արապաճիք,
ոմանք լըղատք: Խան ու սուլթանն բազում ասքէրով գնացին:
Եւ ետ այնորիկ ԲԺ (12) զատըրղայ եկաւ թէ՛ Աւզուն կերթամ,
ինձ Ռ (1000) և Շ (500) խանթար պիտի պաքսիմատ, որ եփե-
ցաք, որ գնեցաք, տըւաք որ գնաց:

Կարապետ վարդապետ եկաւ քարոզեց և 2 (6) քահանայ ար-

զիւեց, և ետոյ արձակեց, չհասքն բաժանեց, Երուսաղէմա գան-
ձանակ հաստատեց⁴⁴ ամէն եկեղեցի և ետոյ ղնաց յԵրուսաղէմ:
Կատարեալ և հաստատ վարդավետ էր, Բ (2) աշակերտօքն:

Ժողովուրդն սուրբ Թորոսու Վարդէվանն գլուխն, Եօթ աղ-
5 րերաց աղբիւրն վերըստին նորոգեաց և զարգարեաց: Աստուած
լուսաւորէ հողին առաջին շինողացն և վերըստին զարդարողացն.
ամէն:

Թվին ՌՀէ (1628) Թվականին զարձեալ Շահինքէրայ սո[ւ]լ- 229ա
թանն հեծել վերուց ու ելաւ զնաց ի վերա խանդամուրին: Թու-
10 նան⁴⁵ անցաւ Շահինքէրայն բաղում ասքէրով, և ետ այնորիկ
մեծ բարկութիւն եղև՝ խանդամուրն Չթախին հետ մէկ եղաւ ու
սուլթանն կոտորուեցաւ ու ասքէրն ամէնն չարքուեցաւ, պարո-
նայք մեռան, մոզաներ մեռան, սուլթանն ճորով խալըսեցաւ
Թունայէն անցաւ, Թախթն եկաւ: Եւ ետ այնորիկ խանդամուրն
15 ետեանցն եկաւ ի Պաղչա-Սաբայն, Դ (4) քովըն պարտեց ու մէջ
իւր, ամիսն լման հանց զապուն արաւ. որ փախչելու կամ կըր-
վելու ճար չունէին, որ մէկ տաս օրմ ալ երթար, նա վէր կանէին.
Իւրեանց կերակուր չիքար, ձիանուն խոտ չիքար. Անիծած Նո-
ղայն ը (4) քովն աւիրեց, որ Թալլեց տըներ ու տեղրանք քակեց, 229բ
20 ոչխար ու տաւարն քիշեց ու ձիանն ամէնն ասքէրին կերցուց,
չարութիւն շատ արաւ, որն ասենք կամ զորն պատմեմ⁴⁶ Եւ
այնորիկ աստուած լուս արաւ, ԲԺԲ (12000)-ան հայ եկաւ. Գո-
ռէ[ու],⁴⁷ իւան ու ասքէրն խապար չունէին, մին սուլթանն գի-
տակ էր, ձեռաց տակէ մարգ խրկել էր. Երբ որ եկան զարկին
25 Թուրն Նոզային, խանն, սուլթանն քիչմն հաստատեցան ու կռիւ
կանկնեցան, բազում ասքէր մեռան: խանդամուրն փախաւ եկաւ⁴⁸
Կաֆան մտաւ իր նողայոյն և ու իր խալխոյն՝ Ռ (1000) կամ
Շ (500) աւտով ով, ըլտրղայոյն, ձիով ու ուխտոյն, եղնով ու ոչ-
խարոյն, կնկնոյն ու տղոյն, ճորտոյն ու ծառայոյն, եկան լցվան
30 Կաֆան, տներն, բերթին տակերն, աւեր տեղրանք, Հեաբ-
փ ը էչան խանտակն ամէնն լցվան, մայիսի ԻԲ (22), աւրն հինգ- 230ա
շաբթի Համբարձըմանն⁴⁹ Եւ ետ այնորիկ Թօփրախալացին հայ
ու տաճիկ ամէնն [բ]երթն մտան մարդ չի մնաց գուսն, Թէ այ-
սօր գուգա կու կոխէ, անգիտութիւն արաւ չեկաւ, իրենց պայ-
35 րաճալ վրայ էր, արաւ, հապա եկաւ, ինչ որ եկաւ նա, զայ
բազում տներ աւիրեց և գեղրանք կոխեց, ոչխարն ու տաւարն,
պախր ու եզն ու կոմէչն քիշեց իրեր. տիբվաիքն ամէնն լալա-
կին հետն եկան, ոմանք գտան կէսվի կէս, ոմանք իսկի չի գը-
տան ու լալագին ի ետ դարձան: Անունն անիծած ու զինքն Մէ-
40 հէմէտ փաշան, որ քաղքին տէրն էր և այլ պաղի մեծունայքն
ամէնն մէկ եղան ու շատ չարիք գործեցին՝ խան ը տակ փորել 230բ
տըւին Ժ (10) օրն մէմն, խան կու բերէին ԺԵ (15) օրն մէնն,
անչափ սուտ կու ասէին, ոմանք ցամքով կու բերէին, ոմանք
ծովով, սուտ վկայներն կու գային, Թօփեր կու քաշէին, պայրախ
45 կու տնկէին, դէլլալք կու կանչէին, Թէ խանն եկաւ. ամէնն սուտ
ու ճար քիչայ: խանն ու սուլտան պատեցին բազում ասքէրով,

ԲԺՌ (12000) ուղղուող բոլոր քաղաքն, ու կու կռվէին, թէ գուռ
 ելէք ու ձեր խանն բերէք, որ ղիրար տեսնունք, զոքա պարիսպն
 կռ[ւ] փակէին ու դուրս չէին ելել ու թօփն ու[ւ] թուվաքն կու
 քաշէին և նոքա կու քաշէին. ոչխարն ու տաւարն քիշեցին, քաղ-
 5 քին տնւրն աւիրեցին, Թօփրախալին, որտեղ որ բարի[ք] գտան
 առին, պատեր քակեցին, գետինն փորեցին, Գ (3) եկեղեցին բա-
 ցին, քակեցին ու աւ || իրեցին, ճառերն ու բուրվառներ առին, 231ա
 երկաթն ու վարագուրերն առին, գիրք և աւետարանք գերի
 տարին, ինչ որ գտան առին, ինչ որ չի գտան, քակեցին ու աւի-
 10 րեցին, թաքճաներուն երկաթն առին, ժամերուն ու տներուն: Եւ
 ետ այնորիկ վանքերն ամենուն մտին, դովին կոտորեցին սուրբ
 սեղաննին քակեցին, չախչնին մտին, չարխերն ու երկրթնին
 առին ու շատ չարիք տիրեցին ի վերա երկրի, վասն մեղաց մե-
 15 րոց: Ամիս, ամիս ու կէս քաղաքն փակվեցաւ՝ առուծախն կտրե-
 ցաւ, հացն ու թացանն հատաւ, խոտն ու ջուրն կարեցաւ. անա-
 սունքն աղաղակէին, մարդիք հառաջէին, կանայք լալին, տղայքն
 ողբային: Բ (2) ոսկի նաւէն ցորեն կառնուին: Ով որ ունէր կու-
 տէր, ով որ չունէր աղաղակէր և աստուած ասլաւինէր: Գիշեր ու
 20 յորեկ հայ ու տաճիկ, մանտր ու մեծ, ամէնն բերթին վերայ
 էին || ու կու ասէին, թէ աս գիշեր կու կոխէ կամ վաղ գիշեր, 231բ
 կու կանչէին ու կու աղաղակին, մինչև եղև զրաւ մարտին: Եկաւ
 խանն ու[ւ] սուլթան ԽԳ (43) խառըրդայոֆն: Երբ որ դայ եկաւ,
 նա տւիրեցաւ և փախաւ գնաց Արապաթին⁵⁰ բերթն մտաւ ԲԺՌ
 (12000) հայոֆն: Դայ գնաց թախթն նստաւ աւգոստոսի ԺԲ (12).
 25 Անիծած Նոդայն խօսքն տեղն եղաւ, Խանտաստուրետ Ազամաթ
 պարոնն սպանեցին: Հազիւ հօս եկին Խանդամուրն ու Շահաու-
 վարն Ա (1) ք քանի մարգովֆն, աւգոստոսի ԻԴ (24), կիրակին
 սուրբ Աննաի, Մուստաֆա մոզանին գլուխն կտրեցին քովի մէկ
 նովէրոֆն: մոզային գլուխն տարին, մարմինըն հոս թաղեցին:
 30 Խտըրին տնէն փախուցին, Պուջանախն տունն գտան չիրախվա-
 ոուն, Դ (4) հոգի էին, Բ (2) փախան, մոզան ու նովարըն ան
 հատաղան ոպանեցին:

Եւ ետ այնորիկ Շահինքէրէն ու խան[ն] տարիմըն կեցան 232ա
 Դոռելին մէջն, Խաննոդային մէջն. տարէպըտուտն ելան ի վերա
 35 Խըրիմին եկան ԽՌ (40.000) հայով և նաւդայով, մայլըպաշոֆ և
 թապուռով և ամաւթալից դարձան. Զի հրամանքն աստուծոյ
 եղաւ, իրենց միջէն աւիրեցաւ թապուրն և դոք[ա] ալ հասան,
 չարդեցին ԺՌ (10.000) հոգի, կամ ալ պակաս, ալ պաղիքն⁵¹
 դարձան գնացին:

40 ՌՀԸ (1629) թրւականին ազգն ուղղու եկաւ Բ (2) աւուր
 ճանփայ ու կոխեց] Խարա-Սուն,⁵² Չարսու-Պա[ղա]րն,⁵³ տըն[ե]րն
 էրեց և աւիրեց, ոմա[ն]ք գե[ր]եց[ո]ւց, [ոմ]անքն ի սուր քաշեց,
 և]տ այնորիք Մանկուպ⁵⁴ կոխեց, մէ]ջն մտաւ, մալն ու խաղ-
 նան [առաւ], [ետ]ոյ Մուղտան⁵⁵ կոխեց, Տաթին [տունն բա]ղում
 45 աւերք արարին, որն ա[սեմ]ք և] զորն չասեմք⁵⁶. դիժար ժամա-
 [հալ] || Եւ դարձեալ յուլիսի Գ (3) օրն, Աւթուղին⁵⁷ կոխեց ու 232բ

մարդիք դերի ասարաւ՝ այր և կին. Մուսլի պարոնին հարսն
ընկաւ. Բ (1000) ոսկի գին կըտրեց, թող դալ պաղիքըն որ ըն-
կան և մնացին գերի, ոմանք աղատեցան, ոմանք ոչ.

5 Եւ ետ այնորիկ Օ (50) շայխայ⁵⁸ Ֆէնէ ոլընէն⁵⁹ եկան,
Սանտրխտով⁶⁰ ու Կեղլով⁶¹ կոխեցին ու զարկին կրակ. Չարսու-
Պաղարն այրեցին և աւիրեցին, բազում տեղիս գերեցին ու կո-
ղոպտեցին ու ելան դընացին. Դարձեալ Ախքէրման քաղաքն
կոխեցին և աւերեցին, պութուն ամառն բազում աւերք արարին.
Առաջն [Կաղանտիպն⁶² կոխեցին, Բ (8) կըտոր գեզ այրեցին ու
10 աւերեցին. Եւ ետոյ ոռւթաւնն] բազում [առքէր]օվ ելաւ, սէֆէր
գընաց [ի] վերա Գոռ[եղու և ա]մօթալից դարձան. Բա[զում]մ
մարդ [սպանեցին], բազումք դերի [ա]նկան. Է. Բ (7000) յիւ ||
ւղու ինքըն արն (?) բերին. Անթի. Ե. անհամար որ մնաց, [ո]վ կարէ
պատ[մ]ել, Տէօլվէտքէրէ ոռւ[լտանն] խալըսեցաւ, խանդամուրն || 233ա
15 այլ չեկաւ. Սալմայշան աս⁶³ եկաւ խրրիմ և ետոյ գընաց, Նողայն
ալ հետ գոչեցին աս յեւրդէն. Կիւլումպիւրն եկաւ. խանդամուրին
տեղն նըստաւ.

[Դարձեալ Բ. Բ (1629) թվակ[ան]ին, դեկտեմբերի ամսուն
9 եր[մ] ա[ն]ցաւ,⁶⁴ բուսքն թընտաց, յունվար ամսուն || [Կ]ապեց
20 և բացվեցաւ, բրդըւան ալ բացվաւ. հրամանքն աստուծոյ է, ով
կարէ իմանալ.⁶⁵

Բ. Բ (1630) թվականին Կաֆային խարաճն Հասան աղայ
անիծածն էառ և շատ չարչարեց զժողովուրդն և զքահանայքն,
թէ գրեցէք զժողովուրդ[ն]ն՝ զԿաֆային և զեկամուտն, զխըրմ-
25 ցին և զգեզացին, դամէնըն տէֆտէր արաւ. Տաթին տունն գընաց
շատ աղմուկն արաւ, Դ (4) տարոյ Ե (5) տարոյ տղաքն խարաճ
գրեց, ուրացողացն խարաճ իառ:

Կաֆային փաշան, Հոռմին եպիսկոպոսն մի աւր մեռան.
եպիսկոպոսն թաղեցին, փաշային մարմինն Լստամպաւ տարին,
30 ամսեանն աւաւստաւսի, պահոցն Աստուածածնի.⁶⁶

Սեկտեմբերին փաշայ եկաւ, բարի մարդ էր, քաղքին բա-
րեկամ էր, Ե (5) ամիս նստաւ, մանգուլ արին յունվարի Ի. Բ
(29). ելաւ խանին գնաց. ասաւր շաքաթ օր Հասան աղան քարի
բռնեցին,⁶⁷ փախաւ ճորով խալսեցաւ, աստուած վրէժ արաւ Գ
35 Դ (3—4) տարու տղայոցն անն չի թող:

Բ. Բ (1631) թվականն որ մըտաք այլ բան դարմանալի
Լ. Գ (33) հողի մանգուլ փաշային ծառաներուն⁶⁸ հափսէն
եկան ցորեկով, բարով մտան նաւըն, եկան գընացին, քաղքին
մարդիք ապուշ մնացին. Բ (2) նաւ ետեանցն գնաց, թէ կառ-
40 նում և ամաւթալից դարձաւ, կըռիւ արին, ոմանք մեռան, ոմանք
եարալըլ դարձան. ետոյ փաշան գընաց խաւըրդայով չի հասաւ,
դարձաւ եկաւ քաղաքիս ըսպէնճն իյառ. քաղաքացիք արդ արին,
խանն արդ արաւ թէ՛ քաղ[ք]նին տէր թողայ չեղաւ. Աւաթ, հա-
ղար բերան, որ քաղքին մէջն աղէկ մարդն չապրին, եթող դը-
45 նաց. մէկ անիծած փաշա մի եկաւ տեղն, չար և անօրէն, պար-
տատէր,⁷⁰ վասն մեղաց մերոց է. Ոչ քահանայ կու հանգչի և ոչ
աշխարհական, նոր-նորու խարճ կուզէ, համ փաշայ է, համ ամիր-

տար է, նադրը է, ով կու զուրուցէ, զինչ որ անէ, ձեռն է, մի
թէ աստուած վէրէժն անէ:

Թվին ՌՀԷ (1628) ապրիլի Ի (20), աւրն կիրակի, Քաշաւաի 333
սուրբան Կաֆան կոխեց՝ մահալան Համբարձրման: Անիծածն:¹¹
5 որ է որդի Թուաման պէին, եկաւ գերեցսւց, ոմանս թալլեց, ոմանս
ի սուր մաշեց ե ալ շատ չարիք քործեց: Էլէմշահպէկին կինն
տարին, խաւաթն ասարին և ալ մէկ քանիքն: Գին կըրեցին
Շ (500) ոսկի, ինչ որ ոսկին դնացնայ, ըսպանեցին զամէնըն:
Էլէմշահպէկին կընոջն լաշն ըբերին, Ա (1) քանի հոգոյմ ալ՝
10 ք[ը]խտոնաց մարմինն ի հաւն մնաց: Խաւաթն ճորով ագատե-
ցաւ: միծ արրոմովթիւն եղաւ քաղաքին, երբ որ լաշերն, որ
ըբերին, Կուռճի խապախին տոջն հայ ու տաճիկ ամենեքեան լա-
յին և ողբային: Յուդուսն ինչ որ Թէքեայն¹² եկել էր, փառք աս-
տուծոյ, աստուած պահեց մեր մահալան: Ջէքէրեային չարաա-
15 լոէն Բ (2) Թըւաք քաշվեցաւ, ան տեսաւ, դարձաւ զընաց, ապա
մենք աղատեցար:¹³

ՌՁ (1631) Թվականին Ըստամպաւալ պատուիրաքն մեղի
եպիսկոպոս խրեկեց ժողովարար և վասն հասքի և չի հասքի:
Սուրբ Յակոբայ կիրակին¹⁴, սուրբ Սարգիս պատարագմատոյց
20 տէր Անդրէասն պարոնտէրն և Գալուստ սարկաւարքըն նամակ
կարդացին, ամենեքեան քահանայք հաւանէաք մեղ ծանուցում
արարին: Խաւճա Մսիրին հետ եկան, առաջ նորա ժամն իջան,
որ է սուրբ Յովաննէս Մըկըրաիչ, քահան[այ] տէր Գրբիդոր, որ
մականուռն Խոմայճի:

25 Խաչատուր պարոնտէրն վանքէն մեղադրանք և բանադը-
րանք խրեկեց խաւճա Մըսըրին: Յունվարի Ե (օ), ճրագալուցին
ըբերին բանադրանքն: Յունվարի ԺՁ (16)-ըն, աւրն երկուշաբթի,
սուրբ Հրեշտակապետ ժողովք եղաւ՝ քահանայից և ժողովըրդոց
և քըննութիւն արաւ Անդրէաս պարոնտէրն: Տէր Մաղաքէին փի-
30 լոնն առին, վասն ան պատճառին, որ իր գլխոյն բան էր արեր՝
քահան[այ] տարաւ Խարա-Սուն աւրհնել երես, հօս բերին, դուս
հանին, անոր համար եղաւ աղմուք, Նորընծային փիլոնն ալ
առին: Ներսէս հաբեղին փիլոնն առին: Խաւճայ Մարգարէն,
Խաւճայ Լաջինն, Լուսպարոնն, տէր Մինասն զնացին պարոն-
35 տէրն ըբերին հաշտութիւն արին:

Թվին ՌՀԸ (1629) Վարագայ խաչին ուրբաթն¹⁵ տէր Թորոս || 234
պարոնտէրն փոխեցաւ առ աստուած զընաց: ԺԵ (15) աւուրն
ետեւ տէր Մարգարէ քահանան փոխեցաւ աստուած, մու-
սաֆիր քահանայ էր, գարիպ և անտէր: Եպիսկոպոս չիքար, ոչ
40 վարդապետ, Թաղումն քահանայք կատարեցին: Մովսէս պարոն-
տէրն Ըստամպոյ վաղջանեցաւ:¹⁶ Խաչատուր վարդապետն եկաւ
էջմիածնայ լուսափուխ մեռնաւ, որ էր նիւիրակ նորընծա տէր
Մովսէս կաթողիկոսին:¹⁷ Բ (2) աշակերտ ունէր, մինն ճգնաւոր
մինն կիսասարկաւաք:

45 ՌՀԹ (1630) Թվականին ամսեան յունիսի մեր տէր Խաչա-
տուր վարդապետն եկաւ Լէհաց տընէն: ան շտըթոյն Բ (2) վար-

դապետ մեկտեղ եղան և ուրախացան քահանայք ե ժողովուրդք-
նուիրակն քաղաքն իջաւ, մեր վարդապետն իր վանքն նըստաւ,
որ է Չարխաւիան Աստուածածին, որ կոչին որ Նրեշխաւոր, այլ
ոմանք Պէստէկիրման ասեն:

- 5 Նիւիրակ վարդապետն դատապարտեց ըդքահանայքն, Դ—Ն
(4—5) քահանայ արգիլեց, «ասւքանք իառ, ոսկի, դիրք, խաչ,
ըսկի, սըրն կամաւ, որն ակամայ, ժողովուրդ ալ բանադըրեց՝
Վարդանն, Յարութիւնն և այլ մէկ քանիքն: Քաղաքիս ժամերն
ամէնն ժուռ եկաւ, ինչ որ տըւին էառ՝ դաւադան արւին, սս-
10 մաւուրք տըւին:

- Տէր Պաշատուր նորընծա պարոնտէրն եկաւ էջմիածնայ
յուլիս ամսու, Բ (2) վարդապետ, Ա (1) հայրապետ մէկաեղ եկան
ի սուրբ Լուսաւորիչ: Երեքն ալ տէր Պաշատուր, նիւիրակն հար-
կիք արաւ, պարոնտէրին ոտն լըւաց և մեծարեց:⁸ Նիւիրակ կա-
15 ցուց պարոնտէ[ը]ն և տէր Մըկըրտիչն ուղարկեց Կէղիով, Պաղ-
[չ]ա—Սարայն, Պարա-Սուռն, գեղըրանքն ընթանուր [Խըր]մին եր-
կիրն, գընացին, նիւիրակեցին ու բերին: [Ինքն? շըր]ջամուլիք
մարդ էր՝ կահ ասաց Կաֆան կո[ւ] երթամ, կ)ահ ասաց կերթամ
մեր Թօփըախաւան, այ || մըս, կահ ասաց գուղամ, կահ ասաց
20 չեմ ի գալ, ինձի ըստակ բերէք: Կտպեցաք մնացաք, ըստակ ժո-
ղովելոյ ճար չիքայ: Նւ դարձեալ ինքն ելաւ գընաց, մէմ ալ
ինքն նիւիրակեց, եառ յեկաւ նըստաւ: Պարա-Սուռն, խապար խըր-
կեց կաֆոցոց, դիս եկէք առէք, կամ մեռոնըս ուղարկեցէք:

- Մենք մեռոնն ուղարկեցաք,⁹ ետոյ բարկացաւ մեղ կաֆա- 234բ
25 ցոցս: Ելան [դ]աւլվաթորայք և քահանայք հաւասար գնացաք,
ապա ուրախացաւ, Դ (3) ժամէս Ճ (100) խոռոչ ուղաց, Բ (2)
ժամէն Լ (30) խոռոչ էառ, մեր ժամէն՝ սուրբ Թորոսու Լ (30)
էաւ, ետոյ մեռոնն Թափեց Պարա-Սուռն: Աղուհացից Բ (2)-ուսմ⁸⁰
հինգշարթի ելաւ գնաց Պալըխլուն,⁸¹ թէ նաւ կը մտանեմ, չե-
30 դաւ, եկաւ Կեղիով, հօն ալ չեղաւ, դարձաւ եկաւ Կաֆան, խօճա
Մսըրն նաւ իդիր. աստուած աւբհնէ զինքն, տարիմըն կեցաւ՝
պահմն Կաֆան, Կէղիով,⁸² Պարա-Սուռն և այլ պաղի տեղըրանք,
աւլի մեր քաղաքն եկաւ:

- Թվականն ՌՁ (1631) այսաւր շաբաթ օր է, ապրիլի Լ (30)
35 է, այս եկաւ ան սահաթին մտաւ նաւ և գընաց, աստուած բարի
ճանապարհ տայ:

- Նէրսէս քահանան փոխեցաւ առ աստուած ապրիլի Ժ (10),
սուրբ Զատիկին կիրակին, շիջաւ ջահն սուրբ Գէորգայ, տեըրամե-
ցոյց ըղմեղ, ընկերակից էր, մեզ հոգեւոր եղբայր էր, աստուած լու-
40 սաւորէ զիր հոգին և ԻԴ (24) քահանայից դասուն դասակից⁸³ և
պսակակից արասցէ. ամէն:

- Նւ դարձեալ այսօր մեծ սուք պատահեցաւ մեղ՝ քահանա-
յից և ժողովըրտոց, զի ջահն աշխարհիս շիջաւ, պարծանքըն
քրիստոնէից խափանեցաւ, ակն Կաֆա քաղաքիս խաւարեցաւ:
45 զի հովիվըն⁸⁴ մեր բաժանեցաւ, առ հովապետն մեր վերացաւ:
Զի տէր Պաշատուր վարդապետ այսաւր փոխեցաւ յաշխարհէս,

- ի յերկինս վերացաւ, մայիսին առաջի աւրն, կիրակի: Վասն
 երաշտութեան համար չաւք արաք.⁸⁵ ԲԱ (21) քահանայէայ, Բ
 (2)-ըն մուսաֆիր էր՝ Ա (1)-ըն կեզլովցի, մէկն ըսեցիցի, մէկմ
 ալ հաքեղայ, մէկ ալ այս լուսաւոր հոգի վարդապետն. [թ]ա-
 5 փուր⁸⁶ ելաք մէմըն ման եկաւ վարդապետն, երկուս ու ի՞նչ ճաթ
 չեղաւ, զընաց պառկեցաւ, լեզուն կապեցաւ ի՞նչ ժամն ասաք, հոգին
 առ աստուած աւանդեաց: Խաչ[ատուր պարո]նտէրն Խըմէն եկաւ,
 հասաւ այսաւր ի Թաղ[ման հովա]պետին: Ասէք աստուած լու-
 սաւոր[է] զիր հոգին. Ի՞ (24) [վա]րդ[ա]պետաց և քահանայից դա-
 10 սուն դասակից և պրսակակից արասցէ. ամմէն: Քահանայ[ա]ք և
 Ժողովուրդք աւախ ասէք հազար ըերան, բարի մարդ էր և կատա-
 ըեալ վարդապետ, խալատն այն էր, որ գինէսէր և խմա[ւ]ղ էր,
 վասն այն պատճառին համար Ժողովուրդքըն կատէին և հարկիք
 չէին աներ:
- 15 Յուլիսի Ե (5) աւր կիրակիլուս, Խարա-Սու քաղաքին աս- 230ա
 տուած բարկացաւ, վասն մեղաց մերոց. անձրեւ եկաւ, որոտում
 եղև, կածկըտուն, հեղեղն եկաւ և պատեց բոլոր քաղաքն, քակեց
 տըններն և խանըթներն, կարմընճներն և պաղչաններն, սարայ-
 ներն և չարաախներն, ծառերն ու ճըղերն, տապախ խանաններն և
 20 պաւեայ խանաններն, աշճիներն ու ըսճիներն, պէզազներն ու
 խաղաղներն, հացածախներն և խասապներն. պաւզաճիք և մէյ-
 խանաճիքն, ամմէնըն քակեց ու աւերեց հեղեղն ու սէլն, հազար
 կամ հինկ հարուր կամ թէ այլ աւելի հոգիք զըխտեցան հայ ու
 տաճիկ, կաֆացիք և խարասուցիք, պաղըրկաններն և մուսաֆիր-
 25 ներ, խարիպներն ու անտէրներն, ոմանց կիներն տարաւ այրըն
 մնաց, ոմանց այրըն տարաւ կիներն մնաց, ոմանց տունն ու տեղն,
 այր ու կին, տղայքն ու ապրանքն զամէն էառ ու տարաւ,
 ոմանց այրն տարաւ Ի (2) տըղոփն, ոմանց կիներն տարաւ Գ (3)
 ու Դ (4) տըղոփն. Նոյա ջըրհեղեղըն նմանեցաւ: Մինաս վարդա-
 30 պետին ու Սուլթանին մեծ կարմունճըն տարաւ, հանց տարաւ
 քարն ու փատն, գամն լո՛ւ. երկաթն, որ տեղն ալ չերևիլ, քաղ-
 քին Գ (3) փային Ա (1) փայըն տարաւ: Չաթան պարիսպն աւի-
 ըեցաւ, Բ (2) ըսղնիքըն քակտեցաւ, ճամէքաններն աւերեցաւ,
 Բ (2) մզկիթ ու մէճիթ աւերեցաւ ու մէտըրսէ բըլաւ որ սոխ-
 35 տայներն խըխտեցան: Եւ այլ շատ բազում⁸⁷ քանչելիք եղաւ.
 մեր Հայոց սուրը Աւգսէնտ անուանեալ եկեղեցիին աղատեցաւ,
 քովի տըններն որքն բըլաւ, որքն շէն մնաց, որին պատըն բըլաւ,
 որին առիքն չոքեցաւ, որին կէսըն տարաւ, կէսըն մընաց, աը-
 խներն աւերեցաւ, չախչըներն: Քանչելիք շատ եղաւ. ամսեան
 40 յուլիսի բազում անձրեւ եկաւ. Կաֆա քաղաքիս ջուրըն նըւազե-
 ցաւ պիտ տառապանք կու. քաշեմք:

Ասքէն ելաւ զընաց Թաթարն ու Թուրքն ի Խըզըլպաշ,
 դեկտեմբերի ամսուն ելան եկան ըսպահիքն, Թաթարն մնաց: ॥
 Ճաւլվաթքէրէյ սուլթանըն՝ փոխեցաւ առ աստուած, Եղբար խա- 230բ
 նին և Խաղըլխան⁸⁸ Նորատին սուլթանըն տեղըն նըստաւ, Սա-

լամաթքէրէ խանին որդին:⁸⁰ խանին որդին Սուլթանն սէֆէր
զընաց ի վերա Գոռելին ամսեան յունվարի:

Թվականն ՌՁԱ (1632) ձմեռնն ծանոր եղաւ. Եւթ եղաւ
քաղքին ստակն, աւերեցաւ, առ ու ծախըն կըտրե[ց]աւ. խանըն
5 հայտադարաւ, արապաք չեկաւ, մարդիքն ապուշ ֆնացին: Աս
տարիս նտհան⁹ էր, ամէն¹⁰ իրաց պակասութիւն եղաւ: Խոտ
չիքարամ ըռնէ. ձրմեռն ալ այսպէս եղաւ, անասու[նքն] դա-
պունութիւն քաշեցին, թրոյունքն ամենայն, առվատախն ձր-
ռաւք կու ըռնէին, եկան դեղրանքն ընկան ու քաղաքն: Սըֆէր-
10 լըն կօտըրված եկաւ երկու փային մէկն, ճորո[վ] եկաւ:

Փետրվարի ԺԵ (15) Կաֆան կըրակ ընկաւ Դ—Ե (4—5) խա-
նութ երեցաւ, հաղիւ հասան անցսւցին. Հինգշաբթիուս Ապա-
ղային Բ (2) նաւն եկաւ: Ալի փաշային որդին մեռած բերին,
լացով հառաչով նաւէն հանին, քաղաքըն մտուցին ետեանցն:
15 Գիտես թէ աստուած բարկացաւ քամի եղաւ, հուրթունայ եղաւ
ան գիշերն, չախչընեւ կոտըրտեցաւ, պարիսպէն կըաորմն տեղ
բլաւ Գ (3) տան վերայ և շատ քանչելիք եղաւ: Մհմատ ոօֆի
կասէին, տընով տեղով, որդով և դըս[տ]երով սըբբաչանչ եղաւ:

Փետրվարի ԺԷ (17), օրն ուրբաթ, աշխարհս ժողով[ի]եղաւ,
20 մարդիք հօն ժողովեցան քարերն պեղեցին, Զ (8) լաշ հանեցին՝
Բ (2) յայր և կին, Բ (2) ալ տրղայ մեռան քաբախեղդ և փտտա-
հեղդ եղան. և շատ մարդոյ դեն եղաւ: Զի Ահմատ Սօֆի ասաց
մարդն, վաշխաթողով մարդ էր և ձիոյ չախչիպան էր, տունն
քակտեցաւ չաղաչն աւերեցաւ, ով որ ղրաւկան ունէր տակըն
25 ֆնաց, ոմանք ղրաան և առին, ոմանք ոչ գտան և շըւարեալ
ֆնացին:

Ըստամպա[ւ]լ շատ վիճմունք եղաւ, մեծ ահագին խաւսըւաֆ
փաշան սպաննեցին, որ ոմանք ահէն քան ղուռ կու ղողային.
Եղբայրք⁹¹ ետի ժամանակին հասաք, աստուած փըրկէ զմեղ ի
30 փորձանաց.² || և այլ շատ մեծունք սպաննեցին, ըսպահիք 236ա
ջարգեցին, ղոմանս թրով, սրով սպաննեցին, ղոմանս⁹³ դեղդե-
ցին, ղոմանս ծովըն ձգեցին և այլ ոմանք փախըստական եղեալ,
Ե (5) մէն տեղ, Ժ (10) մէկ տէղ գըտան սպաննեցին ցորեկով,
գիշերով տան մէջ գըտան: Մ (50) Ժ (100) տանըն կըրակ դար-
35 կին, շատ կին այրի թողին, շատ որդի անհայր թողին: Մէկ ժա-
մանակ մի Ապաղա փաշան ենկիչէրիք սպաննեց, հիմա սուլթան
Մուրատն ըսպահիքն սպաննեց:

Ճանպէքէբէյ խանն էմր արաւ յունիս ամսու ոչխարաղէն⁹⁴
պայրամ արին:

40 Եկաւ խաղըլղայ սուլթանըն, խանին կորմիշ արաւ, ետոյ
եկան պահմն քաշեցին, գընացին Անապիին⁹⁵ մտան. խան ելաւ
գնաց սուլթան նըստել էր, օրն ուրբաթ էր, սէյմէններն եկան
լըցվան թէ՛ շէնլիք կանենք, թվաք կու քաշենք, մէկ անիծածն
ի ղարկ սուլթանին կոյշտն թըւաքով, արունն ի գոգըն լըցվան,
45 ի հօն հոգին առ աստուած աւանդեց: Ատիլ սուլթան էր և բարի
տես, ա[ւ]ախ և ափսոս արեւուն, զի Ե (5) ամիս էր քանի խա-

ղըլղայ էր. Բ (2) եղբայր ունէր, նոքա փախան զընացին, Մէհէ-
մէթքէրէ սուլթան աեղըն զրրին: Յուլիս ամսու Աղախէն⁹⁸ նաւեր
եկան, Շահինքէրային էլլին մէջն էր, Բ (2) հողի՝ Ա (1)-ըն կա-
ֆացի, մէկն մըողայ և այլ բազում խազնայ, թագաւորին կու
5 ասանէին: Մեր կաֆացի ըսպահիք ժողովեցաք Բ (2) էլլին ըմ-
պրոնեցին, խուլան հափս արին, ելան զընացին թէ՛ նաւըն կու
կոխեմք, խազնան կառնումք: Նոքա ամենեքեան ենկիչերիք⁹⁹
էին, դէմ դրրին խովեցան. չի կարացին նաւն երթալու և ամաւ-
թալից դարձան, ենկիչարիք ժողովեցան, ըսպահիք ժողովեցան
10 կըռիւ արին, բերդին դովին փակեցին: Բ (2) օր յետոյ խաւսք
ենկիչարոցն եղաւ, էլլին հանին խուլայէն նաւըն գրրին, իրենց
խազնայովն խրրկեցին:

Եւ եա այնորիկ կաֆացուս խարաճն եկաւ, հասը⁹⁸ հարճ 236բ
կասեն, անունն անիծած ու զինքն, մարդոյ գլուխ Գ—Գ (3—3)
15 ոսկի: Բրիստոնէայք լացին, ողբացին թէ ճար չունինք տալոյ,
էմըն Բ (2) ոսկի է, Բ (2) առ, թէ չէ նաւըն կու մանումք կեր-
թամք թագաւորին, մեզի արդ⁹⁹ տուր: Մէկ դատաւոր մի կայր
ձէլ չողաղարիսպէն,¹⁰⁰ որ անունն ասեն Մուսաօղլի կամ թէ
Սութէօղլի, ան անիծածն էր դատաւոր, էմը չարաւ Բ (2), այլ
20 Գ (3), մասն այն պաաճառին համար, որ ըրըշվաթ կերել էր,
քրիստոնեայք շրվտր¹⁰¹ ցնացին: Տեսան որ չեղաւ, մարդ խըը-
կեցին Դուռն. ինչ որ մեր մարդն գընաց, անկից մէկ բարէ-
պաշա քրիտոնեամն էմը էառ եկաւ¹⁰² թէ՛ Բ (2) ոսկի թող առ-
նուն: Ալ վայ չի բռնեցին, բազում քրիստոնեայք ոտից վերա
25 ելան, քաղքիս փաշան մանազուլ էր, նոր փաշային դէհեան եկել
էր, նայ մեր զիհաց էր, անիծած խատին էմը չարաւ և դարձեալ¹⁰³
մարդ ուղարկեցաք ոչ գիտեմք թէ որպէս կու լինայ: Եւ դար-
ձեալ զարմանալի բան մի՛ ժՁ (16) խատըրղայ եկաւ Կաֆան և
ասին,¹⁰⁴ թէ է (7) խայրիս կայ Կէրջին¹⁰⁵ զին. ան է (7) խա-
30 յըղըն բազում աւերք արարեր էին, հիմա ժՁ (16) խաաըրղայ
եկան վըրան զընացին և այլ բազում, սանտալ¹⁰⁶ խայրիս չի կար-
ցան առնուլ, զիրենք զիրենք ըսպտնեցին, ամենեքեան ծովըն
թափեցան: Ծովըն սաղլըլ տեղ կայր, ամենեքեա[ն] մէջն ցնացին.
Լ (30) հոգուն ժ (10)-ըն չեկաւ, Ի (20) հոգուն Ե (5)-ըն չեկաւ,
35 ալ պաղիքն ամօթալից և սեերես զարձան, Բ (2) օրն կեցան,
եկան զընացին վըտարեցան: Շահ ինչ, զէնէն բաշխայ, ետոյ է (7)
արապայ մարդ եկաւ մերկիկ, բորիք, սաղէն աղատել էին, ան-
չաք չէին, որ նոցա նայէին, նոքա գնացին, ն[ս]քա եկան.¹⁰⁷

[Բ]ՁՁ (1637) թվականին Յինայէթքէրէին¹⁰⁸ Բ (2) եղ- 237ա
40 ըայրն սպանեցին, Նողայն, որ էր [Պ]անդէմիրն, տարեմն եկած
էր Իպրաին փաշան, որ է Պիչխիճին, սուլթան ս[պա]ննեց, աա-
րէպառտն իրենք մեռան [Յինայ]էթքէր ողորմելի ցնաց. ելաւ
գնաց թ[ազա]ւորին. թագաւոր Պատէրքէրային խրկեց,¹⁰⁹ [նորա]ն
ըսողանեց,¹¹⁰

45 Աստուածային հրամանաւն Ըռըստաքէսն տուն առի էտըր-

մէլիքս¹¹¹ տըլի, հարսանիք արաք, պըսակեցաք հոկտեմբերի
առաջի աւերն, Վարազայ խաչին երկուշարթին:

ՌՂԴ (1645) Թվականին Պաղչա-Սարայն գընացի Ե (5)
[ա]միս քահանայագործութիւն արի. [տ]արէգիրն Հոյ (70) էր,
5 զատիկ ապրիլի 2 (6) էր:

[Ռ]ՂԸ (1649)-ին Ըստամպօլ գընացի աւգ[ոս]տոսի[ն], նո-
յեմբերի[ն] եկի, զատիկ ապրիլի ԻԵ (25) էր.¹¹²

Եւ զարձեալ Ինայէթքէրէյ խանին հայիւն¹¹³ որ եկաւ, աշ- 238ա
խաբն էրերաց և երկիր տաքնապեցաւ. և ողբս աւրինէին, որ
այնպիսի բարի Թագաւորէն ղրկըւեցան և ատիլ սուլթանէ, որ-
10 պէս գաբնան ծաղիկ երեւեցան և աչաց մարդկան անայտ եղան.

ՌՁԶ (1637) Թվականին ամսեանն մայիսի մեծ սուք պա-
տահեցաւ ի վերա յերկրի. Այսօր Պաթըրքէրէյ խանն զարդեաւ
ի քնոյ, խընգրեաց արեան վրէժ ի նոցանէ, սպաննեց Սալմա-
15 շան և այլ պաղի մողաներն հաւասար, մանտր ու մեծ մինչև
օրորոցն.¹¹⁴ Մանսուր աւզլիին հուտն հատուց, Անօրէն Օրախախ
մողան արեան տէր էր, որ ոմանք կասեն, թէ ԺԸ (18) Թագա-
ւորի որդոյ և զարմի գլուխ առել է, այսօր՝ զրաւն եղև, չարն չա-
րութեամբ կորեաւ.¹¹⁵

ՌՁԸ (1639) Թվականին, ամսեանն մայիսի Գ (3), ազգ նո-
ղայ, չըղաթայ, Թաթար ելան, Խրիմէն գնացին, Գ (3)-ըն մէկ
տեղ եկաք¹¹⁶ գէնդէշարին՝ մէկն Հաճի Թարխան¹¹⁷ գնաց, մէկն
Չարքէս մըտաւ և մէկն զարձաւ Խրիմ եկաւ:

ՌՁԹ (1640) մտաք Թվական սուլթան Մուրատն փոխեցաւ
25 առ աստուած, զի ատիլ Թագաւոր էր և հզ[որ] ի պատերազմի,
զի մեծ սուք պատահե[ց]աւ ամենայն երկի[ր]. Թագաւոր կացու-
ցին եղբայրն սուլթան Իպրահիմն.¹¹⁸ և այդ է:

Մարտի Թ (9) տնտեսին կիրակին երկուշարթիլու շարժ
եղաւ ո[ր] աշխարհս երերաց և սասանեցան ամենեքեան:

Այս է փակագիր իմաստունն իմանայ և անիմաստն զար- 238բ
մանայ. որ եղբայր և զիս յիշեայ զբազմամեղս՝
դիԻ Ա էճ Ա ՍՍ ՅՅ ՎԾ ՎԾ ՍԾ ՍԾ է ՍԾ ՍԾ է ՎՎ,
ՍՍ է ԵՌ ԹՌ ԺԺ ԺԵԺԵ ԺԺ ՆՆ ՅՅ ՌՌ կաթողիկոս,
ԼԼ ԺԺ ԵՌ Ա ԼԼ ՅՅ ՌՌ,
35 ՃՃ Ա ԵՌ ԴՌ ԺԺ ԵՌ ՅՅ ՌՌ,
ՌՇ ՌՇ Ա ԵՌ ԲԲ Ա ՄՄ, ՄՄ ԺԺ ԼԼ ՅՅ ԽԵԽԵ ՅՅ ՌՌ,
ՌՌ ԺԺ ՃՃ է ՅՅ ՄՄ.¹¹⁹

Թվական [Ռ]ՁԹ (1640) էր, բազում ասքէ[ր] եկաւ Կա-
ֆան, նաւով, ծովով, խատըրղայով, նաւով, խայըխով, Խասաա-
40 մոնու.¹²⁰ սանճախէն 2 (900) Թիմարի սպահիք. Ծ—Կ (50—60)
չատըր զարկին, եկան Թօփրախալան խուլային առջև նստան,
և ետոյ ձի առին, արապայ առին, ելան գնացին Աղախ, ամսեան
յունիսի. Խանն, փաշան Թող այլ պաղի պէկլէրպէկիներ, ծանտր
փաշաներ, ծանտր պարոնայք, Ուռումբի¹²¹ ասքէր, Պօղտնէն¹²²
45 ասքէր, Թաթար, նողայ, չըղաթայ, չէրքէս, ոչ կարեմ գրով պատ-
մ[ել] կամ լեզ[վ]ով. Բ (2) Թագաւորի ասքէր ՀԲ (72) միլա[թ]էն

- կային: Դնացին Աղսի կոտորեցան և շատ դատեցան դարտակ
 ելան, Աղախ չի կարացան առնելու և ամօթալից դարձան. ԽՌ
 (40000) գլխաւոր մեռաւ և այլ պաղիքն. ո՛վ կարէ պատմել զա-
 դէտն, որ եղև ի վերայ Ազախ քաղաքին, շատ չարիք տիրեաց:
- 5 Հայն բերթէն ի դուս լաղըմ արաւ, որտեղ որ Օսմանլըին
 ասքէրն կար ցիր, ու ցան արաւ սօխախ սօխա[խ] իրաց, ամէն
 լաղըմ թափելուն Ռ (1000) հոգի երկինքն ի վեր կու ելանէ և
 դարձեալ ի վայր կու իջնէր լէշն, [ո]մանք ղլխի վար և ոմն¹²³
- 10 Է (7) ամիս պատերազմեցան Կրէտէս կրղղին ճորով առին, 239ա
 ղայն ալ թէ ըղորդ կամ սուտ.¹²⁴
 Շիրին պարոն և մողանին նոքա [ա] եղեն տարտարոսի,
 թուր քաշեցին ի վերայ խանին, ամօթալից եղեալ երկրի Ե (5)
 ամիս ի տարտարոսի, ետոյ եղև հաշտութիւն:
- 15 Եկաւ քաղաքս Գ (3) վարդապետ՝ Սարգիս, Թորոս, Առաքել
 նըւիրակ՝ արեղայ, քահանայ ժողովարար: Երկիրն մեր սղու-
 թիւն է, առուտուր չիքայ, խանորայք, պարոնայք տարտարոսի
 և ժողովուրդն երերմի, ահայ հասաք վերջ ժամանակի:
- 20 Ռշն (1646) թվականին, մարտի ԻԹ (29) մեր Հայոց զա-
 տիկ էր. ղիժար սղութիւն եղև, չարեկն Բ (2) խուռ ելաւ, հաց
 ո՛վ կու տեսանէ, ֆախիւր ֆուխարայ շուար ֆնացել էին: Մեծա-
 տունք ղոնէդուռ անկան՝ ղատի, նայիպ, որտեղ ցորեն իմանային,
 կու թալլէին. Դ (4) չարեկ ցորեն լինար, մինն տէր կուտային,
 [ֆնացածն] կու բաշխէին: Նաւըն կէտրեցաւ, յարապայ չեկաւ,
- 25 քաղա[ք] փակվեցաւ մինչև միջնաց կէսն.¹²⁵ ԻԲ (22) մարտի
 բաղում արապայ եկաւ, որ քաղաքն լցուաւ, աստուած առաքեաց
 և պատրաստեաց ժողով[ու]րդ՝ անկերակուր, անգուման, որ ակն
 ու գուման չուէաք. ԻԴ (23), այսօր կիրակի է,¹²⁶ Բ (2) արա-
 պայ ալ հաց ալ եկաւ Խարա-Սուէն, որ յաշխարհս լիացաւ: Տա-
 րիս Այծեղջուրն է, վերադիր ԻԲ (22) է, լուսնագիրն ԺԳ (13) է,
- 30 եօթներեակն¹²⁷ Դ (4) է, գիրն Ը (8)-ն է: Մալթային գնացած
 վէղիրն հայն սպաններ է ի կրօնին.¹²⁸
 Դարձեալ գամք մեր երկիրն, որ ասեմք Կաֆայ քաղաք 239բ
 հիւսիսական կողմն և Հոնաց երկիր, որ բըղխէ զկաթն և զմեղրն:
- 35 Ապայ է (7) տարի է, որ թանկութիւն է, հիմի աստուած երեստ
 անչափ, որ յառաջի աժնութեան խարարն կու գտանեմք. փառք
 աստուծոյ: Ապայ ինչ անեմք Ազախն եղև մեզ պատուհաս, Կա-
 ֆայիս բարութիւնն ի հաւն կու կըրի. Ե (5) նաւ, Ե (5) թփաղ,
 զախիբայ և այլ բաղում բարութիւն առին գնացին Ազախ: Եւ
- 40 ետ այնորիկ Զ (6) նաւ ենկիչերի եկաւ, ոմանք ասին Շ (500)
 է: Է (7) նաւ ըսպահի քաղաքս դառ[ն]ացուցին: Ս (2000) չուալ
 ուղացին և չաթան, հայէ և տաճկէ խարաճ Զ Զ (6 6) խուռ.
 աւարի զփատ ու ծեղ¹²⁹ Գ—Դ (3—4) աւուրն մէջ կատարեցաւ: Դ
 (4) խաւըրզայ, ԺԳ (13) նաւ ելան գնացին ետոյ, Շ (500) չուալ
 այլ ետոյ: Աւգոստոսի ԺԶ (16), Աստուածածնին կիրակին, Ե—Զ

5—6) նաևով եկաւ Տրապիզոն[ն]ի փաշան բազում ասքէրով, ամէնն ըսպահիք ելան ի խուլայէն ի դուս, չաարբ զարկին անհամար:

Թվին ՌՂԶ (1647)-ին Ֆռանկապատունն, որ Մալթայ ան-
լանէին Գ (3) ասրի է, որ կռիւ ունին, ազդն Հազարացոց, հի-
մայ Սուլթայ քաղաքն առել են:¹⁴⁰

Թաղաւորին որդի եղիլ է և դուսար կարդիլ է սուլթան Իպ-
րահիմն, վասն այն պ[ա]տճառին համար ամէք քաղաք ածնա-
նմայ եղիլ է յունվարի ԺԻ (12): Կօռ ալ արին:

Դարձեալ անիծած մուֆտին չար խորհեցաւ սուրբ Նշանին,
10 գնաց Լսլամ խանն:¹⁴¹ Խափեց և ասաց թէ. «Թաղաւոր, ինձ մէկ
աեղմն առուր, որ քո Խրիմ քաղաքը յստիմ: Շորա սիրան
ա || աղտաղայ էր, առեր էր. «Թող լինայ, որտեղ որ կուղևո հա- 240ա
ւանածդ: Անօրէն ասեր է թէ. «Մէկ վանք մի կայ անբնակ,
մէջն մարդ չիքայ: Նա այլ ասեր է թէ «Քեզ արւի, դնայ վա-
հելէ»:

Վայրն դէշ վերայ դըլ[ի]ուն, ով անաւրէն և անիրաւ, չար
և չարազուլի սաաանայի, դու Թագաւոր կու խափես թէ անաւր
է, հոտ, քրիստոնէեայք խապար չունին: Կաֆայէն ևլաւ գնաց, թէ
կերթամ վանքն, մըղկիթ կանեմ, մինարայ կու շինեմ: Խաչա-
տուր պարոնտէրն և Գրիգոր եպիսկոպոսն շուար ֆնացին, որ ոչ
20 գլխեն զինչ առնեն: Հաւատացեալք ժողովեցան՝ զըմօցիք, զե-
ղացիք, այրք և կանայք, վանուց զուռն հասին, դուռն փակեցին,
նևրս մտին: Անօրէնն երբ ևկաւ մուտ չդտաւ, ամօթալից և սև
երես դարձաւ: Կաֆացիք և խարասուցիք խանին գնացին, մեզ
25 երեստ, բազում դանձ գընաց: Աստուած վէրէժ անէ նոցին:

Թվին ՌՂԸ (1649) Արիստաքէս վարդապետն Կաֆան եկաւ
եառ խաբա-Սու գն[ացին] Գրիգոր պարոնտէրին հեա, հօն ձեռն-
[ա]դրու: Թիւն արին մէկ քահանայ, Բ (2) աւաք սարկաւաք:
Ծնընդեանն աւրհնեցին մինչև ի յազուհաց հօն կեցան:¹⁴² Պիտի
30 Կեղով պիտի երթար, Պաղչտյ-Սարայն Լըթար քարոզէր և վար-
դապետէր:

[Ե]ւ խա[պ]տր ևկաւ Կեղովէն, թէ եկեղեցի[ն] առին այլադ-
դիքն, Լսլաւքէյ խանին հ[ը]մանաւն: Եկին անօրէնք քակեցին
և ա[լ]իւրեցին, քրիստոնէայք շուար ֆնացին, մարտի ԺԶ (16),
35 օրն ուրբաթ, շարաթն չարչարանաց Լուսաւորչին մուտն ի Վի-
րապին:

Չատիկ մարտի ԻԵ (25) էր, քրիստոնէայք առանց օրինաց 240բ
ֆնացին, քահանայք լալադին, մեծ սուդ պատահեցաւ: Աւախ
մեր Հայոց ազգին և Կեղով քաղաքին: Եւ ետ այնորիկ, մէկ զար-
40 մանալի բանմ ալ եղաւ մեր Կաֆայ քաղաքին: Վէզիրն փաշայ
էր, Աղախին Լնկիչէրիքն չարացան, խիստ վընաս կու անէին ի
մէջ քաղաքին: Փաշային Բ—Գ (2—3) մարդըն սպանեցին, զոմն
ծեծեցին, զոմն դանկով դարկին: Վասն այն պատճառին համար
տիււան արին ի մէջ պաղատին: Պալարան չոքեցու և կոտորե-
45 ցաւ գերանն, որ բազում մարդիք ի յվար անցան և մեռան,
ԲԺ (200) աւելի կամ պակաս մարդիք սապխաւ եղան՝ ոմանց

ոտրն, ոմանց ձեռքն, ոմանց գլուխն և այլ ոմանց սիրուն,
օրն ուրբաթ՝ խաչելութեան և մատնութեան, այնպէս հրաշ գոր-
ծեցաւ: Անօրէնք դեռեալ չեն ըսգաստանալ: Էմրերըս չի բռնեց,
Ըսպէնճն լման իսո:

5 Եւ Լա այնորիկ ասորիի ԺԵ (15), օրն կիրակիին ան ||
ուժ շարաթ ձեռնադրութիւն արաւ մեր Դրի[գո]ր պարոնտէրն,
աւրհնեց տէր Սիմէոն ի վերայ Քաջստին և տէր Զաքարիայն՝
Աշխարհի կամ թէ Կեղղովի, Դ (3) դըպիր, Յովաննէս իմ աշա-
[կեր]տ, սպասաւոր սուրբ Դէորքայ, Երկուշաբթի պարխայն ||
10 յորայ գնացաք, որ ոմանք ետ ֆացին ծե[ծ] կերան, տուքանք
տուին:

Եւ Լտ այն[սրի]կ Ըսլամքէրէյ խանն բաղում գորօք գընաց
[ի]վերայ Դոռելին և բաղում յաշխարհ տապալեցաւ Հայոց և
մտաւ ի Պար քաղաքն:¹³³ Քաղքին տէրն Բոթոսկին իւր || որդոքն 241ա
15 և իւր վաղիրոքն, իւր իշխանօքն ըսպեցաւ և բերին դերի ի
Խրրիմ և ածին բանդ և երկաթի կապանօք կապեցին և կըտրեցին
գին բաղում դահեկան, ի քաղաքն Ղալայ¹³⁴ ի բերթն հրէից:
Եւ Լտսյ այլ ասքէր խրկեց խանն քան դառաջինն, որ բաղում
աւերք արարին, տապալեցին բաղում գիւղ և քաղաք և գերեցին
20 դամենեւեան առհասարակ, ով կտրէ պատմել զաղէտն, որ եղաւ,
Դոռելաց տուն աւերեցաւ:

Թվականն Ռ.ՂԹ (1650) մտաք, Խրիմքէրէյ սուլթանըն¹³⁵
եւաւ հեծել ի վերայ Մօսկովին,¹³⁶ Պօղտան կոխեց անցաւ գնաց
և նոքայ միամտեցան, թէ մեք ասի չեմք, մենք Օսմանլի ծա-
ռայ եմք և ոչ հնադանգիմք ձեզ: Դարձաւ սուլթան իւր զօրօքն
25 և թուր քաշեց, այնպէս պատերադմ[ց]աւ յերկիր սասանեցաւ,
որ բընաւ ախպ[է]ն եղած չէր: Բազում գերի վերուց [և բաղ]ում
քաղաք աւերեց, Պողտանին պար[ոնն] || իով խալըսեցաւ փա-
խաւ գնաց ու [Իլով?] քաղաքբերթն մտաւ: Երկիրն աշարմաշար
30 արաւ [թ]աթարն ու Խըմելն¹³⁷ մինչև ի Հեհաց երկիր գնաց: Հե-
հաց տունն մտաւ, գերեցուց ա]նթ[իւ] ծառայ. ԳՃ (300) հոգի
մեր աղ[դէն Հու]ս[ա]ւորչի: Ամենեքեան գերի յանկան ի [ձեռն
անօրին]աց և անհաւատից: Եւ դ[արձ]ալ պատճառն ինքն է, որ
անհաւատն, հաւատացեալ քրիստոնէտյք գերի կան[է մէկ] չէ,
35 երկուս չէ, ամառ ու ձմէռ. ինձ ախպ[է]ս կ[ու]թվի, որ ամէն տա-
րի պատկերք կու փոխեն, նոր աստուած կանվանեն, || իւրեանց 241բ
տունն պատկերաց երկիրպազանեն, խունկ ածեն և մոմ վառեն,
ծունտը կրկնեն, աստուծոյ երկիր ոչ պազանեն, այլ ձեռայգոր-
ծաց վասն] ան պատճառին համար, որ նոքայ տարտարոս մա-
40 շին ի ձեռն թաթարին և Նետողաց ազգին: Եկան գերի անկան
երկիր մեր, Խրիմ և ի Գաֆայ, ի Նարա-Սու և ի Պաղչայ-Սարայ,
Կէղղով և Օրինբերան, որտեղ մեր քրիստոնէեայք հաւաքեալ են,
գնեցին և աղատեցին և այլ պաղիքն, ով կարէ պատմել,¹³⁸ զի ան-
թիւ են և բազում երամ, թէ որպէս եղան և որպէս չեղան:

45 Յովաննէս վարդապետն եկաւ Հեհաց տնէն, մէկ արեղայ
ունէր՝ տէր Յուսկան, փոխեցաւ առ աստուած Օրինբերանն, բե-

րին Պըղտի Ղարա-Սուռն թաղեցին: Ձմեռն սուրբ Սարգիս
 ձմեռնեց՝ վարդապետան: Նուիրակ Լեալ Պարրիէլ վարդապետան
 էջմիածնայ, լուսարուղիս մեռնաւն, սուրբ Սարգիս, հովեպետ
 Հրեշտակապետն, ետոյ գնաց Ղարա-Սուռ: Պաղչայ-Սարայ, ի Կեդ-
 5 լսվի, հրիւսի գեղօրիքն: Ետոյ եկաւ քաղաքն աղուհիացից,¹³⁰
 զամենեւեւն նուիրեց: Սուրբ զատիկն իմ ժամ արաւ, ի սուրբ
 Թորոս. աէր Սարգիս արեղայն և Ի (2) սարկաւաքն ձեռն-
 [աղեց]: Ետոյ եկաւ Յակոբ վարդապետն ||| ցիւն. [ա]նառակ
 և շատակեր Գրախուսն | և յաւան: Հափըռառաշակեր,¹⁴⁰ [նա-
 10 կու կա]նկնէր ի զիմացն և ասէր [ո]տա[նաւոր] խենթութենթ,
 որ ինքն ասէր և գրեթէ մեղք ի սպիտակ թղթին, որ սեպու-
 [ց]անէր քան զերեսն:
 Նոր ցորեն եկաւ ճԺ (110) ստակ ծախուցաւ, փառք առ- 242ա
 տուծոյ մարգասիրին, երբ որ աայ աստուած առատ, կու տայ. ով
 15 կարէ ճառել աստուծոյ բանն. ժամն չանցաւ. Կ (60) ստակ տրին,
 պահմ ալ անձաց Խ (40) տրին, մէկալուսն աւրն կապիւն Լ (1)
 ոսկի: Եւ այլ թէ խոնարհն բարձրանայ և բարձրն ցածանայ,
 ծառայ տէր լինայ, տէրն խոնարհանայ. Նոյն աւրինակ տէրվիշ
 Մէհէմէտ փաշան, որ վէզիր եղաւ, շէխին ծառայն էր. կաֆա-
 20 ցիք լսցըն, Էլ[ան] ղնացին, ոմանց պարզեւ ետուր, իր չեւ[ու]-
 պուսն՝ տղայութիւն, թէ զկարճաբան եկաւ. փոխեցաւ առ ասա-
 ւած, ոմանք ա[ս]ին ԽԷ՝ աղէկ մարդ էր, Կաֆային շատ կու հաս-
 նէր թէ ապրէր: Եւ զա[րձե] ալ [ա]նօրէն Իսկոն. որ շատ անօ-
 րէ[նութիւն և] չարիք արեւ էր, և ճեւալութիւն՝ պէկէր պէկիք
 25 սպանեւ էր, մալ և դա ||| քա[կ]եւ էր և ասքէրի տիրեւ էր ||
 զէր թագաւորին բազում ժամանակ ||| տուած էր, առածն
 առած էր ||| զրաւ մարտին, որ իր ոռոքն եկաւ ||| հեցաւ տըղայ
 սուլթան Մէհմէտ եղաւ վէզիր, արաւ ասի[ն]երուն բարութիւն,
 Գ (3) ամիս կամ ||| էղաւ, ոպանեցին չ ||| եաւ Մուրատ փա-
 30 շան ն[ստաւ]: Եւ ետ այնորիկ ղնայ վար ||| այլ երկիր և ետ
 նորա այլ զաղի ||| այլ և այլ եղև յերկիր և հրե ||
 Յամսեան յուլիսի հայրն զօրացաւ, եկաւ Դաման քաղաքն 242բ
 իյառ, ԼԴ (34) շայղայ, ծանար զին կրտրեց, որ ոմանք աղա-
 անցան, ոմանք մնացին զերի և անճարակ: Ետոյ եղև մահ աա-
 35 րածամ, որ տուն չի մնաց չի լացաց: Սեղտենքերի մասուն
 Դէրթաղաչ փաշան եկաւ Կաֆայ քաղաքիս պէկէպէտի և նաղր:
 Յաթոռ Լուսաւորչին էջմիածնի աէր Փիլիպոսն փոխեցաւ
 առ աստուած: Տէր Յա[կոբ]ն նստաւ յաթոռ տէրութեան իւր
 թէմ[ին], աիրէ յարեւելից արեմուտ, ի հիւս[ի]ւս[ա]կտն կողմն, որ
 40 է մայրաքաղաք Կաֆայ և Խրրիմ, որ է Հոնաց երկիր: Տա[րի]ն
 զմեզ նեղացուցեւ է. քաղաքն եկ[ան] մէկ հայրապետ և Ե (5)
 վարդապետ, փ[րկա]րար աստուած փրկէ և ազատէ:
 [Թ]վակա[ն]ն ԲՃԵ (1656) մտաք տանուտէրն Կ[արիճ] է,
 յերկիրս ամէն բարեաւք իլի է, [ամենայն բե]րքն աստուծոյ է, որ
 45 նաւաւարն կու կրէ [րազում] և [ա]նհամար. աւրն Ճ (100) արա-
 ւայ [Մ (200)], Յ (300), Ն (400), Շ (500). ոմանք ասին թէ

այսօր ॥ [արա]պայ ցորեն նաւն մաւաւ, գընաց ॥ երկիր լիա-
 ցաւ. Բսասմայօր ան ॥ ն յերկիրն անթիւ է, բայց մեր ॥ է
 փառք տրուողին և պար[գեողին աստուծոյ] մերոյ, ով կարէ պատ-
 մել և ճառ[ել, ողորմածու.]թիւն աստուծոյ առատ և ան[համա]ր.
 5 ॥ շարժ եղաւ, օրն երեքշաբթի. ॥ վերայ հայն եկաւ և ոչ կա-
 ր[աց առնուլ], ծեծվեցան հիւ թուրքին և [ետ դ.]արձան. Ետոյ
 գնաց Տէլիպալթն [տ]իրեց, զիւրեանք չարդեց և գեր[ե]վարեց.
 Դաւիթ վարդապետն նըւիրակ եկաւ մեզի էջմիածնէն, նոր- 143ա
 ընծայ տէր Յակոբ կաթողիկոսէն, լուսաբուղ մեռնաւն, մէկ յա-
 10 բեզայ սարկաւագով, հոկտեմբերի սմսուն. Ձրմեռն գիժար եղաւ
 և ձընամեծ, մահ անասնոց և խաշանց. Գ (3) յամիս Նոդային
 ձին ու. տաւարն և ոչխարն չարգեցան, իրենք սո[վ]այլից մեռան,
 ապրածն ալ ապր[ուստ] չունի. Եւ ետ այնորիկ Բ (2) էլ ն ॥ եկաւ.
 Յուռուսն կոխեց ամե[նեքե]ան ի սուր մաշեց խեղճ ու ող[որմելի].
 15 Թվականն ՌՃ և Ջ (1657)-ըն մարտի ԻԹ (29) զա-
 տիկ արտք. [յայս ա]արիս այլ չար երեկ և անհա ॥ զէբայ Օս-
 մանլիին թագաւորն հե ॥ ելանէ, Ե (5) խալեան կուզէ ॥ պիտի
 ըրդատ, պիտի պալը ॥ [պի]աի երկաթ բանող, պիտի ք ॥ ա-
 մէն էսնէֆէ մընացեալ, Ժ (10) [աւր] ॥ ուշ տըւին. Եւ ետ այ-
 20 նորիկ ա[յլ] ॥ ձըգեցին յաշխարհի, Հայի, [Թաթարի], Հոռմի,
 Հէհի, այլազգն աս[ին] չենք ի տալ. մեր հայքն շուտ [տւին],
 քաղդին Թաթար փաշան [տսաց դ]ուք տուէք, ինչ տանք ॥
 մենք ասաք՝ խանին կ ॥ [հրամ]այեց թէ՛ ելէք գնացէ[ք] ॥
 Մարտի ԻԱ (21) օրն Ծաղ[կ]ազ[արդի] տօլվատորայք Ֆախիր
 25 ֆո[խարայ] ազդ կուտեցան սուրբ Թորոս [և ասացին], թէ կեր-
 թամք, հրամ[ան]քն աստուծոյ. ճա[մփուլն] անձրեւ եկաւ, բուք 143բ
 պօրան եղաւ, ելած մարգիքն, որ ոմանք ճանփան մնացին, ետոյ
 դարձան եկան սուրբ Թորոս, ամէն մար[դ] իւր տուն գընաց,
 եկեղեցիք փակվեցան, Ծաղկաղարդին¹⁴¹ օրն, գիշերն զըռացօք
 30 չեղաւ. երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթի[ն], հինգշաբ-
 թի[ն] ելան տօլվատորայք մոմով, շաքարով, պէշքէշ[ու]վ, մնացած
 ժողովուրդք և մար[դ]ք զատիկ արաք անիւ և դողու, [ոմանք] ոչ
 հագուստ հագան, ոչ հաւ[կիթ ն]երկեցին, ով որ իմաստունք
 են ॥ գացողք, վասն յաշխարհի և թագաւորաց ॥ [խաղ]աղու-
 35 թեանց կամեցողք, այնոք[իկ անգ]էտք և տըղմար[դ]ք ոչ խար-
 ճէն ॥ յար ունի ոչ խարաճէն, ինձ[պէս] մարդիք զատիկ արին
 հաւ[կիթ ներ]կեցին, հագան և կապեցին, [կերան և] խըմեցին և
 դարձեալ լե[զու]ն երկան է հուքմո հրաման ॥ չեն հաւանիր
 գընացողացն ॥ ալ երես չերեպ, Բ—Գ (2—3) աւր ॥ կեցան,
 40 գուռն չի կտրաց[ին] ॥ ստան առնէ, Բ (2) հոգի այլ [գնացին]
 Դաւիթիւրն արմէնաւ¹⁴² ր ॥ ար չեկաւ. Դաղաքն ալ ॥ մարգիքն
 ալ կիսով ॥ կաֆացին, դրիմցի ॥ [հա]ֆայի խարաճ կու ա[ան]
 ॥ [քաղ]աք[ի] հիմայ բաժանեցան ॥ և հակառակ դարձան մի-
 մի[անց] Բ (1000) Շ (500) զոռւ կայ այլ աւե[լ]ի հաֆ[ան տւ]եց.
 45 Յունի[սի] ԺՁ (16) գիշերն խաւարեցաւ լուսինն. Մէկալու¹⁴⁴
 գիշերն անձրեւ եկաւ, գետոց արուցմուք եղաւ, որ շատ տուն բը-

- լաւ, շատ կարմունճ [ու]արաւ. մէկ կինն տարաւ Բ (2) արդոյն,
այրն մնաց բարբարական, մէկ իմամի տաւաւ, կին ու տղայն
մնացին բարբարական. Հրաշ զարմանալիք, որ խանն հեծել է
բաղում ասքէրով ॥ սէ, որ խապար չիքայ անդսւ [ման խտպ]ար
5 իլաւ, թէ խանն Կ (60) զապուր ॥ Մաճառին լի և ուրախ սրը-
ախ. ॥ մեր քաղաքացիք ուրախացա[ն, տօն]անմայ արին ան
պատճառով ॥ ան դեռ չէ եկել քաղաքս խան ॥ լրի է Օռմանլըլ
կա ॥ ու կապ մնա[ց, բո]յաղն փակէ, երթողն այլ ոչ զա[ռնա] ॥
միթէ աստուած արձակէ, այն ժամա[նակ տաւնան]մայ օգոստոսի
10 Զ (6) էր, Գ (3) օր. Դարձեալ տաւնանմայ խաչվե[րաց] 143 ॥
գիշերն. Դ (3) օր Դ (3) գիշեր պ[ատերաղմեղին մ]ինչ Ֆոռնկն
զարձաւ, ճ[անտպարհն] բացուաւ, և այտ է. Դ[արձեալ քաղ]աքս
կայ Դ (3) վարգապե[տ] ॥ արծատն բարիտեո և ॥ հեղահեղի
և տեսն փ ॥ որ ասի ճըպղայ ॥ պի վարդապետո[թիւն] ॥
15 կերպարան և տեսն ॥ տէր Մարաիրոսն է գո ॥ և թագն յաշ-
խարհի և նըւիրակ Յերուսաղէմի, Սա աշակերտ Սոտուածատուր ॥ 244բ
վարդապետի, և յաջոցակալ 144 Եղիազար վարդապետի, Սայ է Հո-
նաց յաշխարհի. ի դրան է սուրբ Նիշանի, պարծանքն խրիմի
և վարդապետն կաֆացի, արդայ գոլով մ[ա]նուկ բարի, արժա[ն]
20 լինի խորին ծերի ॥ [Եղբա]յրք հացն այլ բարձացաւ ॥ ն
ԲՃ (200) կու ասեն աստուած փրկէ ॥ է ձմեռս Ամառն ասա-
ւած տայ և ॥ զարարածս: Ամէն իրք սուղ է ॥ ստակ բանիւրն
նոյն աւրինակ:
- [Թըւտկ]անիս Թ ամի Ճ ու է (1658) էր խալի[և ամիսն
25 էր ասպրիլի, որ լսեցաք ॥ դեցի ողորմելի և կոծելի, Բահ[ն
տր]տ[ու]մ զառն ու լեղի, դի փոխե[ցաւ պար]ոնտէրն մեր, տէր
Դօիգոր ի ճա[նապարհի]ն Յերուսաղէմի, Զի ոչ ժամանակալ. ॥
[2]ինութեան տեառն տեղի և լուսա ॥ ման: Սուք պատահե[ց] ॥ քա-
ղաքի իր վանքն վայե[լու] ॥ Զարխափան 145 Աստուածածին: [Դար]-
30 ձեալ խրիմ Հոնաց ॥ [լուսա]պայծառ սուրբ Նշան ॥ [զարձ]եալ
բոլոր երկրի խր[իմ]ա ॥ քաղքի և ընթան[ուր] ॥ [առաջ]նորդ էր դայ
մեղի ॥ տայ աստուած երեսո նոր[ի]ց ॥ երէս լի[ա]ցոյց Կ—Մ (60—
50) տ ॥ ղի յաւըն, 146

* *

- 35 Խաղիքէրէ խանն մեռաւ Խաղիքէրման[ի]ն մէջն. թվին 144բ
ԹԾ է (1608) յունվարի ամսում մէջն, 147 Զատիկն մարտի Ի է (27)
եղաւ. այտ է:
- Սալամաթքէրէյ 148 խանն եկաւ Ստամպուլայ մայիսի Բ (2)
ի Կաֆան, աւրն երկուշաբթի. երկու տարի թագաւորեաց և ետոյ
40 Ճանպէքէրէյ խան եկաւ, նրոտաւ ի տեղն:
- Թիթ (1620) թվականին Ճանպէքէրէյ խան եկաւ, 149
- ԹՀԲ (1623)-ին Մէհմէտքէրայ խանն եկաւ, մայիսի Թ
(9), օրն ուրբաթ. ԹՀԳ (1624)-ին Շահինքէրէն եկաւ մայիսի
Գ (3), օրն երկուշաբթի. Դարձեալ Ճանպէքէրէյն եկաւ մայիսի
ԻԴ (24), օրն երկուշաբթի: Բաղում չարիք տիրեաց յե[ր]կրի և

դարձաւ. ամօթալից. ևասյ ՌՆԸ (1629) թվականին եկաւ Ճան-
դէքէի:

ՌՁԴ (1635)-ին Ինայէթքէն եկաւ,¹³⁰ Ճանպէքրան գնաց
Իսաամսօլ,¹³¹

5 ՌՁԶ (1637)-ին Պաթըրքէրայն եկաւ,¹³² Դ. (3) եղբայր. 149ա
ՌՁԹ (1640)-ին Մէհմէտէքէրայն խան եղաւ,¹³³

ՌՂԴ (1644) թվականին յուլիսի ԻԸ (28), օրն երկուշաբթի 149բ
Վարդավառին, Ըսլամքէյն խան եկաւ,¹³⁴ Թ. (9) խաւըրդայով. 160ա
Խըրմքէյն սուլթանֆէն ՌՃԴ (1654)-ին փոխեցաւ առ աստուած
յուլիսի յառաջի օրն:

ԺԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՅՈՒՆՆԵՐ

1. Կաֆայում գտնվող եկեղեցիները Մատենադարանի № 2939 ձեռագրում պահպանվել է հետևյալ վկայությունը՝ 1331 թ. երբ թուրքերը գրավում են Կաֆան, 45 եկեղեցիներից մի մասը դարձնում են մզկիթներ, հայերի ձեռքին մնում է 29 եկեղեցի, այդ թվում սուրբ Ուրբաթ, սուրբ Աստուածածին Կօլինը: Իսկ երբ հեղինակը թվում է, թե որ եկեղեցին ինքան հարկ է տալիս թուրքերին, ի միջի այլոց իմանում ենք. սուրբ Ուրբաթ 4 ֆլորի, Կօլի Աստուածածին 6 ֆլորի (էջ 471ա):

2. Մի ուրիշ ժամանակակից, այդ դեպքերի մասին, հետևյալն է գրում. «Թվին Ռևն (=1616) յուլիսի ԻԱ (21) օրն եկին ուռուսին զազախներն, աւերեցին և երեցին բազում. կիրակի Գ. (3) մամ էր անցեր գիշերն և զԿաֆա կոխեցին, թալտնեցին և տներ և խանութներ:» (Ձեռ. № 7707, էջ 71ր):

Բնագրի ժողովուրդն անվան տակ պետք է նկատի ունենալ Դոնի և Ջապորոժյի կազակներին:

3. Բնագրում սեփականությունն ձևավո:

4. Բնագրում տեղի նստաւ տեղն ձևավո, այնուհետև հեղինակն առաջին տեղն ընչել է:

5. Սույն վկայությունը մի փոքր շեղվում է Լեն-Պուլի հաշվումներից, ըստ որի Ահմեդ I-ը մահանում է 1617 թ., հաջորդ Մուստաֆա I-ը իշխում է 1617—1618 թ. թ., Օսման II-ը՝ 1618—1622 թ. թ., Մուստաֆա I-ը երկրորդ անգամ՝ 1622—1623 թ. թ. («Мусульм. династий» стр. 166): Ցամբաուրի մոտ բացակայում է Մուստաֆա I-ի երկրորդ անգամ թագավորելը (տես և հմմտ. E. de Zambaur «Manuel de généalogie et de chronologie pour l'Histoire de l'Islam», Hanover, 1927, Ottomans սխեման: Մուստաֆա I-ի համար Սմիթնոլվն այլ թվեր է տալիս՝ 1618—1622 թ. թ. և 1622—1623 թ. թ. (տես «Крымское ханство» СПб, 1887, стр. 475):

6. Բնագրում սեփական բառի վերջին տառը, հեղինակն սկզբում գրել է «ն», ապա կիսատ թողել և մոտեն ավելացրել «ա»:

7. Պարսկա-օսմանական 1616 թ. կոթմներում, թուրքերին որպես դաշնակից, մասնակցել է նաև Ղրիմի խան Ջանիբեկ Գիրեյ II-ը 30 000 զորքով, իսկ սրանց դեմ, պարսիկների կողմից, կռվում էր Մուհամմեդ III-ի (իշխել է 1622—1627 թ. թ.) եղբայր Շահին Գիրեյը: Այս մասին խիստ համառոտ հիշում է Ամիրնովը («Крымское ханство» стр. 479—480):

8. Ջանիբեկ-Գիրեյ II-րդ, Ղրիմի խան, համաձայն Լեն-Պուլի իշխել է 1610—1622 թ. թ. և 1627—1635 թ. թ. (նույն տեղ, էջ 196): Սակայն Սմիթնոլվն նրա խանության համար այլ թվեր է նշում՝ 1610—1623 թ. թ. և 1627—1629 թ. թ. (նույն տեղ, էջ 473), իսկ վերջին թիվը նաև 1627—1635 (ն. տ., էջ 496):

9. Բնագրում սմյմնա ձևավո: Մծբինի հայրապետ սուրբ Հակոբի տոնը 1620 թ. կրկնի գեկտեմբերի 16-ին:

10. Բնագրում 222թ և 223ա էջերի ներքևի լուսանցքում հեղինակը 1621 թ. ներքո հետագայում ավելացրել է «Ապրիլի ԺԳ (13), օրն աւաթ հինգշաբթի, տէր Խաչատուրն ձեռնադրեցին քահանայ և լուսարար, սուրբ Հրեշտակապետին: Թվին Ռշէ (=1628) ապրիլի Զ (=6), օրն Մաղկազարդի, Խաչատուր քահանայ փոխեցաւ առ աստված տեղեկությունը»:

11. «Տարան» թրք. «daban» նշանակում է սերբան: Այստեղ գործ է ածված հավանաբար սրայլա-ի իմաստով:

12. Դեվլետ Գիրեյը Ջանիբեկ-Գիրեյ II-ի եղբայրն էր: Գոռելը, որի մասին մի քանի անգամ հիշում է հեղինակը, մեզ համար անծանոթ վայր է: Եթե նկատի ունենանք հեղինակի այն վկայությունը, թե 1649 թ. Իսլամ Գիրեյ արշավեց Գոռելի վրա, ապա մտավ Բար քաղաքը, կարելի է ենթադրել, որ Գոռելը գտնվում է հարավ-արևմտյան Ուկրաինայում կամենսկ-Պոդոլսկի, Բերդիվեի, Ժիտոմիրի կողմերում:

13. Բնագրի «Բազում գիրգ նոցա գերի վարել էր» նախադասության իմաստը պարզ չէ, և երկրորդ բառի պատճառով, ինչ է նշանակում «գիրգ» բառը՝ դիրք թե գիրկ, դուցե վերջինիս իմաստով, այսինքն գրկի երեխա:

14. Բնագրի «մէկ արմն աման չէր ետ» նշանակում է մեկ օր ողորմութիւն (այսինքն՝ պարզ, արևոտ օր) չտվեց: «Աման» թրք. ողորմութիւն, ներում, թողութիւն:

15. Պետր է լինի «պողպէտ». թրք. նշանակում է «նեղուց», խոսքը Բոսֆորի մասին է:

16. Բնագրի «Սուլխաղա» բառը արդյո՞ք Սուլխաթը չէ: Այս մասին տես ներքևում ծանոթ. 37:

17. Հեղինակը նկատի ունի սուլթան Օսման II-ի 1621 թ. արշավանքը դեպի Լեհաստան: Ինչպես Լեռնում է սուլթան վկայութիւնից, Օսման II-ին օգնել է Ջանիբեկ Գիրեյը: Առ. Դավրիժեցու մոտ այս դեպքերը նշված են 1620 թ. ներքո (էջ 638):

18. Ճիշտ ձևը Սիլիսարա, բաղաբ Բուլղարիայում, Դանուբի ափին:

19. Բնագրում «թագարորն» ձևով:

20. Օսման II-ի սպանութեան մանրամասնութիւնները տես ներքևում ժամանակագրական մանր հատվածները (XXVII): Տես և հմմտ. Դավրիժեցի, էջ 638:

21. Մուստաֆա I-ը Լեկրոքը անդամ իշխել է 1622—1623 թ. թ.: Տես վերևում, ծանոթ. 5:

22. Խուզրին լիման անծանոթ վայր:

23. Հեղինակը մի քանի անգամ հիշում է «Տաթին» կամ «Տաթին տունն» տեղանունը, անծանոթ վայր:

24. Իմա Թաման, համանուն թերակղզու վրա:

25. Բնագրում դրված է այսպես՝ «Գեկերին որ ըսկեկա»:

26. Սմիրնովը Մուհամմեդ Գիրեյ III-ի իշխանութեան սկիզբը համարում է 1623 թ. մարտից հետո (էջ 480), իսկ Լեն-Պուլը այն համարում է 1622 թ. (էջ 196): Անշուշտ մեր հեղինակի վկայութիւնը ստույգ է, որպես ժամանակակցի, մանավանդ, որ վկայութիւնը նշված է սմաթովի ճշտութեամբ:

27. Իրականում Ջանիբեկ Գիրեյ II-ը, մեր հեղինակի համաձայն նաև վերջինիս եղբայր Դևլեթ Գիրեյը, արքայութեան Զոռոս, որտեղ սրանցից առաջ բանտարկված էր Մուհամմեդ Գիրեյ III-ը (տես Смирнов, «Крымское ханство» стр. 480):

28. Կարծում ենք խոսքը վերաբերում է Մուհամմեդ Գիրեյ III-ին: Վերևում (էջ 228) հեղինակը վերջինիս գահակալութեան սկիզբը համարում է 1623 թ. մայիսի 9-ին, սակայն նրա իշխանութեան վերջին եզրը չի նշում: Մինչդեռ, համաձայն Սմիրնովի, Մուհամմեդ Գիրեյ III-ը իշխել է մինչև 1627 թ. հունիսը (էջ 489, 494), հմմտ. Լեն-Պուլ (էջ 196): Համեմբը նշում է մինչև 1628 թ., «Geschichte des Osmanischen Reiches» dritter Band, 1835, s. 92: Բնագրի «Գամիս»-ը արդյո՞ք չպետք է լինի «Դամիս»:

29. Բնագրում մի քանի անգամ հիշվում է «Ալերինբերանն», կարծում ենք խոսքի վերաբերում է Պերեկովին, որին թաթարները անվանել են Օր-Կապու, այսինքն՝ Ոսկե դուռ:

30. Մուրադ IV-ը իշխել է 1623—1640 թ. թ.:

31. Բնագրում դրված է «յաւուրը իմ եջի և. յապրիլի Իթ» (29) անմահ պատարագիցի», միտքը պարզ չէ, թվում է թե հեղինակն ակնարկում է իր քահանա ձեռնադրվելուց հետո անցկացրած 40 օրը, որի ժամանակ քահանաները սովորում են եկեղեցական արարողութեան կարգը: Սակայն պատահում է, որ առաջին պատարագը մի քանի օր շուտ կամ ուշ են կատարում: Խաչատուր քահանայի օժնովից մինչև առաջին պատարագը անել է 45 օր: 1624 թ. ապրիլի 29-ը իրոք հինգշաբթի է:

32. Արդյո՞ք Կաղոխը չէ, Անապայի և Նովորոսիյսկի մոտերքում, թերևս ավելի հյուսիս:

33. Սուլթան դեպքերը հեղինակը համառոտում է նաև էջ 228:

34. Այս դեպքերը հեղինակը համառոտում է նաև էջ 228:

35. 1624 թ. Ջանիբեկ Գիրեյ II-ը փորձեց Մուհամմեդ Գիրեյ III-ից խլել իշխանութիւնը. այդ կոփվների մանրամասնութիւնները բացակայում են Սմիրնովի «Крымское ханство» մեծածավալ աշխատութեան մեջ:

36. Իմա հոն, հակառակ «հոս»-ի:

37. Ուղիղ ձևը Սուլկադ կամ Սուլդադ, թաթարները կոչել են էսքի ևըրմ, այսինքն Հին Ղրիմ: Վերջինս գտնվում է Կաֆայից (Թեոդոսիա) մոտավորապես 20 կմ. արևմուտք:

38. Բնագրում «գագառին» ձևով, որը կարծում ենք «գավառին» բառի աղճատումն է: «Կա-

Քաղաքին» բառը գրված է արական հոլովով, այսպես պետք է գրված լինի նաև Սուլթանը, ուստի բնագիրը պետք է կարդալ հոր տիրեց Սուլթանը դաւադին և Կաֆա քաղաքին»:

39. Անշուշա ցանկացել է ասել «բռնեց»:

40. Բնագրի 227-րդ էջի ներքևի տողից հեղինակն ավելացրել է «Յովաննիս վարդապետն եկաւ Իսկն (= 1616) թվականին, որ Էջնքչի գոչի» տեղեկութունը:

41. Երեկ ուզում է ասել շուտուժուտ եկան:

42. Քաղաք Դնեսարյան ծովախորշի հարավ-արևմտյան ափին, Օդեսայից մոտավորապես

80 կմ. հարավ-արևմուտք:

43. Հանդիպում ենք նաև Աւզուն ձևով՝ Մեղ համար անծանոթ վայր:

44. Բնագրում «հաստացեց» ձևով:

45. Իմա Դանուր:

46. Բնագրում «պատմեմա» ձևով:

47. Կարծում ենք պետք է լինի «Գուէլու», որովհետև անցուղարձը տեղի է ունեցել Բաղչի Սարայում, իսկ Գուուը, ինչպես արդեն նշել ենք, Ղրիմում չէր գտնվում (ծանոթ. 12):

48. Բնագրում «եկամ» ձևով:

49. Շահին Գիրեյի և Դեմուրխանի այս կոիվների մասին տես Սմիրնով «Крымское ханство», էջ 495—497: Հմմտ. J. Hammer «Geschichte des Osmanischen Reiches» dritter Band S. 69—70: Սակայն Սմիրնովին հայտնի չէ այդ կոիվներում հայերի մասնակցության փաստը:

50. Բերդաբադը համանուն սլաքի վրա, Թեոդոսիայից մոտավորապես 50 կմ. հյուսիս:

51. «бади» արաբ. նշանակում է՝ անարդար, անիրավ, անհնազանդ, խռովարար, չափն անցկացնող: Բնագրի «ան պադիրն» նշանակում է՝ այն անիրավները և այլն:

52. Կարասու կամ Կարա-Սուր քաղաք, մոտավորապես 60 կմ Կաֆայից արևմուտք:

53. Անհայտ վայր, Կաֆաի մի մասն է, տես վերևում, էջ 161:

54. Կոչվում է МАНЛОПСК կամ Майгунск (տես Смирнов «Крымское ханство» стр. 160—164): Ղրիմի այժմյան Լենինյան շրջանում, ծովափից 5 կմ. հյուսիս գտնվում է Մանկուտ գյուղը, մոտավորապես նույնահնչյուն մի գյուղ էլ՝ Մանդուշ, գտնվում է Բաղչի-Սարայի շրջանում, Բաղչի-Սարայից մոտավորապես 10 կմ. արևելք: Թե սրանցից ո՞րն է պատմական Մանկուպը, դժվարանում ենք ասել, սակայն, եթե նկատի ունենանք կաղակների շարժման ուղղությունը, ապա պատմական Մանկուպը թերևս նույնացնենք Բաղչի-Սարայի Ման-գուշի հետ:

55. Հավանաբար Սուդակը:

56. Դեվլետ Գիրեյը 1629 թ. օգոստոսի սկզբների մի յարլիկում հայտնում է, որ Մուհամմադ Գիրեյ III-ը և Շահին Գիրեյը Դոնի կաղակների օգնությամբ հարձակվել են Ղրիմի վրա և նույնիսկ Կարա-Սուն ավերել (տես Смирнов «Крымское ханство» стр. 495—497):

57. Անծանոթ վայր:

58. Բնագրում «շայխայ»:

59—60. Անծանոթ վայր:

61. Իմա Եվպատորիա:

62. Ղրիմի այժմյան Իչկիի շրջանում գտնվում է Կաղանպիր գյուղը: Շրջակներուն Իչկիից մոտավորապես 15 կմ. հարավ-արևմուտք: Բնագրի «[Կ]աղանատիպ»-ն արդյո՞ք այդ գյուղը չէ:

63. Բնագրում «աս»-ը գրված է վերևի լուսանցքում: «Աս» բառը գուցե գործածել է «սյս» նշանակությամբ:

64. Բնագրում «չեբրանցա» ձևով:

65. Այս ամբողջ հատվածը գրված է 233-ա և բ էջերի ներքևի լուսանցքում հեղինակի կողմից:

66. Այսինքն 1629 թ. օգոստոսի 10—15:

67. Այսինքն քարկոծեցին:

68. Իմա ծառաներն:

69. Մի այլ տեղ էլ հեղինակը գրում է. «Ըսպլենճն լման Լառ», թե ի՞նչ է «ըսպլենճ» բառը, մեզ մնաց անհասկանալի:

70. Փաշայի, ինչպես և այլ պաշտոններ Թուրքիայում վաճառում էին: Այդ պաշտոնը գնելու համար պարտք էին վերցնում: Պաշտոնավարելիս կրկնակի և ավելի հարկ հավաքում պարտքը մարելու և ապրելու համար: Ինչպես երևում է, Կաֆայի նոր փաշան այդպիսի մի պարտա-տեր էր:

71. Այսինքն այս առաջականքը կօղմակերպել է անիծածի մեկը, որը Թուման բեյի որդին է և հանվանն ըի հիշում:

72. Անծանոթ անուն:

73. Զանիրեկ Գիրևյը 1625 թ. հուլիսի վերջերին տեղեկացնում է Միխայիլ Ֆեոդորովիչին, որ Լերր ինքր նորից ստանձնում էր իշխանությունը, երկրորդ անգամ Մուհամմեդ Գիրեյը և Շահին Գիրեյը կաղակների օղնությամբ պաշարել են Կաֆան (տե՛ս Смирнов, «Крымское ханство» стр. 495):

74. Այսինքն դեկտեմբերի 18-ին:

75. Այսինքն սեպտեմբերի 25-ին, որովհետեւ 1629 թ. վարագա խաչի տոներ կընկնի սեպտեմբերի 27-ին, կիրակի:

76. Բնադրում «Մովսէս պարոնտէրն Ըստամբուլ վաղջանեցաւ» գրված է 234 ա էջի աշ լուսանցրում:

77. Բնադրում «Կաթուկիկոսին» ձևով:

78. Բնադրում «մեծարեց» ձևով:

79. Բնադրում «ուղարկացաք» ձևով:

80. 1629 թ. մեծ պատեր կընկնի փետրվարի 16-ից մինչև մարտի 27-ը: Բնագրի «Աղուհացիք Բ (2)-ում հինգշաբթի» հատվածը հասկանում ենք այսպես՝ մեծ պատի երկրորդ շաբաթվա հինգշաբթի օրը, որ է փետրվարի 26-ին, հինգշաբթի:

81. Իմա Բալակլավա, նավահանգիստ թերակղզու արևմտյան ափին, Սևաստոպոլից մոտավորապես 20 կմ. հարավ:

82. Բնադրում «Էէֆլով» ձևով:

83. Բնագրում «դասակիպ» ձևով:

84. Բնագրում «հավինըն» ձևով:

85. Հնում, երաշտ տարիները, անձրև տեղալու նպատակով ձնրադիր աղոթք են արել: Հեղինակը հավանաբար այդ է ակնարկում:

86. Իմա թափոր:

87. Բնագրում «բաժում» ձևով:

88. Կարելի է կարդալ նաև «եռաղբլխան» (կամ «եռաղբղան»), անծանոթ վայրի անուն:

89. Սելեմետ Գիրեյ I, ըստ Լեն-Պուլի, իշխել է 1608—1610 թ. թ. (էջ 196), համառ. Смирнов «Крымское ханство» стр. 472:

90. Բնագրում «Ամէր» ձևով:

91. Բնագրում «եղրայք» ձևով:

92. Թվում է թե մեկ թերթ ընկած է:

93. Բնագրում «զուանս» ձևով:

94. Այսինքն ոչխարի մատաղով:

95. Անապա, նավահանգիստ Սև ծովի ափին, նովորոսիյսկից 40—45 կմ. հյուսիս-արևմուտք:

96. Իմա Աղով:

97. Բնագրում «նեկիչերիչ» ձևով:

98. Հասըլ թրք. նշանակում է արդյունք, բերք, եկամուտ: Խոսքը վերաբերում է եկամտահարկին:

99. Բնագրում «արժ» ձևով:

100. Դուցե Կաֆայի թաղերից մեկն է:

101. Բնագրում «շըրար»:

102. Բնագրում «մէկ բարեպաշտ տա(?)թ քրիստ[ո]անեամն էմր էառ եկաւ» ձևով, երրորդ քառը խանգարում է բնագրի միտքը հասկանալուն, ուստի բնագրից հանեցինք:

103. Բնագրում «գարձեալձ» ձևով:

104. Բնագրում «եկաւ Կաֆան եկ ափն»:

105. Իմա Կերչ:

106. Սանտալ կամ սանդալ (հուն. Σανδαλον) նշանակում է հողաթափ, նաև՝ նավակ, որն ունի սանդալի ձև: Սակայն սանդալը ունի մի այլ նշանակություն ևս՝ ծառի տեսակ, որը հնում կոչել են ալմուկ (տե՛ս աներաժուրին սուրբ գրոց ուսմանն ի Տոգ Անկըսէ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1892, էջ 242): Բնագրի սանտալ խայրխա-ը կարծում ենք գործ է ածվել նավակի տեսակ հասկացությամբ, այսինքն սանդալի ձև ունեցող նավակ, մակույկ:

107. Բնագրի 336ր էջից հետո մի քանի թերթ ընկած լինելու պատճառով 4 տարվա (1633, 1634, 1635, 1636 թվերի) պատմությունը պակասում է:
108. Ինայետ Գիրեյ 1-ին, հաջորդել է Ջանիրեկ Գիրեյ 11-ին և իշխել՝ ըստ Լեն-Պուլի 1635—1638 թ. թ. (էջ 196), Սմիրնովի՝ 1635—1637 թ. թ. (էջ 508): Ստույգ է վերջինի, չմտ. J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches“ dritter Band, s. 929:
109. Խոսքը վերաբերում է Ինայետ Գիրեյ 1-ի հաջորդ Բահատուր Գիրեյ 1-ին, որն իշխել է 1638—1642 թ. թ. (ըստ Լեն-Պուլի, էջ 196), կամ 1637—1642 թ. թ. (ըստ Սմիրնովի, էջ 519): Չմտ. J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches“ dritter Band, s. 223, 929,
110. Չմտ. Смирнов „Крымское ханство“ стр. 519—520:
111. Հեղինակի աղջիկը, որ ծնվել է 1620 թ. սեպտեմբերի 7-ին:
112. Բնագրի 237ա էջի կեսը և 237ր էջն ամբողջությամբ դատարկ է: Տարեգրությունը շարունակվում է, 238ա էջից:
113. Հեղինակը նկատի ունի Ինայետ Գիրեյ 1-ի և նրա Լրկու Լորոր սպանությունը:
114. Բնագրում «օրոցորեն» ձևով:
115. Մասթ, ԻԱ 41:
116. Թերևս պետք է լինի «Եկան»:
117. Արդյո՞ք Աստրախանը չէ:
118. Իրաֆիմ 1-ր իշխել է 1640—1648 թ. թ.:
119. Ծածկադիրը կարդացվում է այսպես՝ 1 ոռո՞ղ՝ Խայատուր Լրեց (բնագրում «Լ» և «ր» տառերի համարժեքը սխալ է նշված՝ ՎՄ ՎՄ-ի փոխարեն, պետք է լինի ՎՇ ՎՇ, ՍՍ ՍՍ՝ ՍՇ, ՍՇ, որպեսզի ոտացվի հեղինակի ստույգ անունը):
- 2-րդ տող՝ տէր Փիլիպոս կաթողիկոս:
- 3-րդ տող՝ Կիրակոս:
- 4-րդ տող՝ Մարտիրոս:
- 5-րդ տող՝ Վարդան, նիկողոս:
- 6-րդ տող՝ Սիմէոն:
120. Արդյո՞ք Սև ծովի հյուսիս-արևմտյան ափերը չեն:
121. Թուրքիայի եվրոպական մասը:
122. Իմա Մուղալիան:
123. Այստեղ բնագիրը թերի է մնում մեկ, գուցե և ավելի թերթեր, ընկնելու պատճառով: Սուլթանահան Բուրբեյի և Ղրիմի խաների միացյալ ուժերով Դոնի և Ալդովի կազակների դեմ կազմակերպված այս կամպանիան, Սմիրնովի կարծիքով տեղի է ունեցել 1641 թ. դարձանից մինչև աշունը (նույն տեղ, էջ 542, Չմտ. Գ. Ալվազովսկի «Պատմություն օսմանյան պետության», հ. Բ, Վենետիկ, 1841, էջ 92: J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches“ dritter Band, s. 223: Սակայն մեր հեղինակը այդ արշավանքի սկիզբը համարում է 1640 թ. հունիսը:
- Բնագրի «Հայն բերթէն ի դուս լաղըմ արաւ» հատվածի իմաստը պարզ ասված չէ, ուռաշին բառի պատճառով: «Հայն» բառը կարող է նշանակել «Հայ», կամ «այն», վերջինիս իմաստով վերահիշյալ նախադասությունը կարելի է այսպես մեկնաբանել՝ «այն բերդից դուրս լաղմ արեց»:
- Մեզ ճիշտ թվում է վերջինը:
124. Խոսքը վերաբերում է թուրքերի և վենետիկցիների միջև Կրետեի համար տեղի ունեցած կռիվներին: Այս վկայությունը թերի է և այն վերաբերում է պատերազմի սկզբին, որն սկսվեց 1645 թ. Կրետեի գրավման այս վկայությունը ստույգ չէ, որին, ի դեպ, հեղինակն էլ կասկածանքով է վերաբերվում: Ինչպես հայտնի է 1645 թ. հունիսին թուրքերը պաշարում են Կանեա նավահանգիստը (Կանեա ծոցի ափին) և երկու ամիս հետո գրավում: Պատերազմը ձգձգվում է մինչև 1669 թ. Կղզու գլխավոր քաղաք՝ Կանդիայի պաշարումը, որն սկսվել էր 1648 թ. ձգձգվեց 20 տարի և այն թուրքերը նվաճեցին 1669 թ. սեպտեմբերին (մանրամասնությունները տես J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches“ dritter Band, s. 296, 630—63: Лян-Пуль, Мус. династии» стр. 162 ծանոթ. 1): Կանդիայի գրավումով Կրետեի համար մղված կռիվները ավարտվում են:
125. Բնագրի «մինչև միջնաց կէսն» արտահայտությունը վերաբերում է մեծ պատի կեսին: 1646 թ. մեծ պատն ընկնում է փետրվարի 9-ից մինչև մարտի 19-ը: Նշանակում է, «մինչև միջնաց կեսն» պետք է հասկանալ մինչև փետրվարի վերջը:
126. 1646 թ. մարտի 23-ը կիրակի չէ, այլ երկուշաբթի:

127. Բնագրում «է. երրևակն» ձևով:

128. Խոսքը վերաբերում է Կրետեի համար վենետիկցիների և թուրքերի մղած կռիվներին: «Վկայությունն ունի փոքրիկ անճշտություններ: Իրականում դեպքերը տեղի են ունեցել այսպես՝ վեղիք Կարա-Մուստաֆայի սպանությունից հետո, նրան հաջորդում է Գամասկոսի կուսակալ Սուլթանզադե Մուհամմեդը (Զիվան Գափուհուպաշ մականունով) 1644 թ.: Վերջինս հեռացվում է վեղիքի պաշտոնից 1645 թ. դեկտեմբերի 17-ին: Սրան հաջորդում է Սալի փաշան, որը 1647 թ. սեպտեմբերի 18-ին խեղդամահ արվեց, սուլթան Իբրահիմի մի հրամանը չկատարելու համար: Վեղիքի պաշտոնից արձակելուց հետո, Սուլթանզադե Մուհամմեդը մասնակցում է Կրետեում մղվող կռիվներին, որտեղ հիվանդանում է մալարիայով և մահանում 1646 թ. հունիսի 12-ին (մանրամասնություններ տես՝ J. Hamner „Geschichte des Osmanischen Reiches“, dritter Band, s. 276—292: Տես և հմտ. Նաև Գ. Ալվազովսքի «Պատմությունն օսմանեան պատմութեան», հատոր Բ, էջ 102—112): Բնագրի՝ «Մալթային գնացած վեղիքն հայն սպաներ է ի կրթին» վկայությունը վերաբերում է Սուլթանզադե Մուհամմեդին և բնագրի հայնս ըստ պետք է հասկանալ «այն» (գուցե և «այնտեղ») իմաստով:

129. Անշուշտ ցանկացել է ասել «եթե»:

130. Խոսքը վերաբերում է Կրետեի համար մղած կռիվներին: Բնագրի «Սուլթա» = Սուլթա, նավահանգիստ Կրետե կղզում, համանուն ծոցի ափին: Ըստ Համմերի Սուլթայի նվաճումը տեղի է ունեցել 1646 թ. վերջերին („Geschichte des Osmanischen Reiches“ dritter Band, s. 286—287):

131. Ղրիմի խաներից Իսլամ Գիրեյ III-ը, հաջորդել է Մուհամմեդ Գիրեյ IV-ին, իշխելով 1644—1654 թ. թ. (J. Hamner, նույն տեղ, էջ 929, Սմիռնով, նույն տեղ, էջ 529):

132. 1649 թ. ադուհացը՝ մեծ պասը սկսվել է փետրվարի 5-ին, հետևապես, Արիստակես վարդապետը Ղարա-Սուլթանացել է հունվարի 6-ից մինչև փետրվարի 5-ը:

133. Բար. Մոդիլևի շրջանում բաղաբ (Ուկրաինական ՍՍՌ), Բուզի վտակ Թովի վրա: XVI—XVIII դարերում Բարը գտնվել է Լեհաստանի և Թյուրքիայի սահմանում: Այն Ռուսաստանին միացվեց 1793 թ.: Այս բաղաբի մասին այլ աղբյուր հիշվում է նաև «Կամենեցա»-ում (էջ 18, 62), Իսլամ Գիրեյի 1649 թ. արշավանքին նախորդող դիվանագիտական հարաբերությունների և արշավանքի մասին տես Կոստոմարով „Богдан Хмельницкий“ том I, СПб., 1859, гл. VI—VII:

134. Կալա բաղաբը արդյո՞ք այժմյան Կոլայը չէ, համանուն շրջանում, Ղրիմի հյուսիս-արևելյան մասում:

135. Ղրիմ Գիրեյը Բահադուր Գիրեյ I-ի և Իսլամ Գիրեյ III-ի կրտսեր եղբայրն էր:

136. Տես և հմտ. Смирнов „Крымское ханство“ стр. 544:

Այս արշավանքի մասին մանրամասնությունները տես Կոստոմարով „Б. Хмельницкий“, том II, гл. II:

137. Հեղինակը նկատի ունի Բոգդան Խմելնիցկուն:

138. Բնագրում «պանմել» ձևով:

139. Այսինքն 1650 թ. փետրվարի 25-ից մինչև ապրիլի 5-ը:

140. Ըստ երևույթին ուղում է ասել շատ ուտելուց հագուստի կոճակները բաց անող:

141. Բնագրում «ծաղկալողդին» ձևով:

142. Գուցե պետք է լինի «ամէնն ալ»:

143. 1657 թվականի սուրբ Խաչի (Խաչվերաց) տոնը կրկնվել է սեպտեմբերի 13-ին:

144. Գուցե ուղում է ասել աշակալ: Բառի վերջում կա «ի», բայց այն չնշված է, ըստ երեւույթին հեղինակի կողմից:

145. Բնագրում «չարփափան» ձևով:

146. Բնագիրն այստեղ ընդհատվում է: Հաջորդ վկայությունները դարձյալ Խաչատուր երեքին են, սակայն նրանք զրված են ժողովածուի տարբեր մասերում:

147. Ղազի Գիրեյ II, Իսլամ Գիրեյ II-ի եղբայրը և հաջորդը. ըստ Լեն-Պուլի, իշխել է երկու անգամ 1588—1594 թ. թ. և 1594—1608 թ. թ. (նույն տեղ, էջ 196), իսկ ըստ Սմիռնովի 1588—1608 թ. թ. (նույն տեղ, էջ 444): Վերջինս այլ էջերում Ղազի Գիրեյի մահը նշում է 1608 թ. մարտին կամ 1607 թ. նոյեմբեր-դեկտեմբերին (նույն տեղ, էջ 463): Ղազի Գիրեյ II-ն իր անունով բերդ կառուցեց 1595—1596 թ. թ. և կռից Ղազի-Կերման (Սմիռնով, նույն տեղ, էջ 460—461). խոսքն այդ բերդի մասին է:

148. Սելեմտ Գիրեյ I-ին, իշխել է 1608—1610 թ.թ. (Լեն-Պուլ, նույն տեղ, էջ 196, Ամիր-նով, նույն տեղ, էջ 472), վերջինիս կարծիքով Սելեմտ Գիրեյը մահացել է 1610 թ. մայիս-հունիսին, իշխելով երկու տարի շուրջ ամիս (էջ 472):

149. Ջանիրեկ Գիրեյ II-ի իշխանության տարիները տես վերեւում, ծանոթ. 8:
150. Իանեւո Գիրեյ I-ը հաջորդել է Ջանիրեկ Գիրեյին, իշխել է ըստ Լեն-Պուլի 1635—1638 թ. թ. (էջ 196), Սմիրնովի՝ 1635 թ. մարտից մինչև 1637 թվականը (էջ 508), Տես և համառ. J. Hammer „Geschichte...“ dritter Band, s. 929:
151. Վկայությունը վերաբերում է Ջանիրեկ Գիրեյի 1623—1624 թ. թ. Հոռոս արսորվելուն (ծանոթ. 27), որից հետո Ղրիմում խան դարձավ Մուհամմեդ Գիրեյը:
152. Տես ծանոթ. 110:
153. Հեղինակի սույն վկայությունը մի փոքր շեղվում է Սմիրնովի և Լեն-Պուլի հաշվումներից, Մուհամմեդ Գիրեյ IV-ն իշխել է 1641—1644 թ. թ. (Սմիրնով, էջ 525), 1642—1644 թ. թ. (Լեն-Պուլ, էջ 196), Տես և համառ. J. Hammer „Geschichte...“ dritter Band, s. 929:
154. Իսլամ Գիրեյ II-ը համաձայն Սմիրնովի Ղրիմի խան դարձել է 1644 թ. հունիսին (էջ 527) և մահացել է 1654 թ. հունիսի վերջերին (էջ 561), իշխելով 10 տարի 5 ամիս 2 ամսո. Hammer „Geschichte...“ dritter Band, s. 929: